

ՓՈՐՏԻՔ № 124

ԻՐԱՎԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ (ՀԱՆԳԵՍ) 2020Թ. (04)

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ
ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ, ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ԻՐԱՎԱՍԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔԵՐՈՒՄ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ (ՅԱՆՅԱՅԻՆ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏՈՐ)
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՐՅՈՒՅԹՆԵՐ, ԵՐԿՐՈՐԳ ՓՈՒԼ
ՀԱՐՅ ՈՒ ԴԱՏԱՍԽԱՆ**





ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ «ԳՈՐԾՔ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ



**ԱՐԹՈՒՐ
ՍԱՐԳՍՅԱՆ**

Աշխատանքի իրավունքի պաշտպանի (հաշտարարի) գրասենյակի ղեկավար գլխավոր խմբագիր



**ՐԱՅԿ
ՍԱՐԳՍՅԱՆ**

ԵՊՀ տնտ. ֆակ. ղեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



**ԱՇՈՏ
ՍԱՐԿՈՅԱՆ**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



**ՎՍՐՂԱՆ
ԲՈՍԱՆՁՅԱՆ**

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



**ԷԴՈՒԱՐԴ
ԹՈՒՄԱՅԱՆ**

ՀԱՄԿ-ի նախագահ



**ՍՈՒՇԵՂ
ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Հայաստանի Ամերիկյան համալսարանի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու

«ԳՈՐԾՔ»-Ի ՊԱՏՎԱԿՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ



ԱՐՏԵՄ ԱՍՏԱՐՅԱՆ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախկին նախարար (2012-2018թթ.)



ՄԻՒԹԱՐ ՄԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախկին նախարար (2009-2010թթ.)



ԱՐՄԵՆ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախկին նախարար (2008-2009թթ.)



ՈԱԶՄԻԿ ՍԱՐՏԻՐՈՅԱՆ

ՀՀ սոցիալական ապահովության նախկին նախարար (1999-2003թթ. ընդմիջումներով)



ԱՐԱՐԱՏ ՄԿՐՏՅԱՆ

Առողջապահության և սոցիալական ապահովության նախկին նախարար (2000թ.)



ԳԱԳԻԿ ԵԳԱՆՅԱՆ

ՀՀ սոցիալական ապահովության նախկին նախարար (1998-1999թթ.)



ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՒՅԱՆ

ՀՀ սոցիալական ապահովության նախկին նախարար (1996-1998թթ.)



ԱՇՈՏ ԵՍԱՅԱՆ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախկին նախարար (1990-1995թթ.)



ՆԱՐԻՆԵ ԲԱԼԱՅԱՆ

Հայաստանի սոցիալական ապահովության նախկին նախարար (1985-1990թթ.)



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1.1. ՀՀ օրենքեր

- Փոփոխություններ և լրացումներ ՀՀ աշխատանքային, հարկային և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերում (պարզաբանումներով) ----- 4

1.2. ՀՀ ԿՈՌՈՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ա) ՀՀ կառավարության նոր որոշումներ.

- Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնհինգերորդ միջոցառումը ----- 17
- Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնվեցերորդ միջոցառումը (ծանոթանալ QR կոդի օգնությամբ) ----- 18
- Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնյոթերորդ միջոցառումը ----- 19
- Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնութերորդ միջոցառումը ----- 21

բ) Փոփոխություններ և լրացումներ ՀՀ կառավարության որոշումներում

- Աշխատանքային օրը տեղափոխելու մասին (պարզաբանումով) ----- 23
- Լրացումներ և փոփոխություններ ՀՀ կառավարության մի շարք որոշումներում (N646-Լ և N703-Լ որոշումներ) ----- 25
- Փոփոխություններ ՀՀ կառավարության մի շարք որոշումներում (N644-Լ) (ծանոթանալ QR կոդի օգնությամբ) ----- 38

II. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2.1. Հաստատվել է ֆինանսական ակտիվների ՀՀ դասակարգիչը (ծանոթանալ QR-ի կոդի օգնությամբ) 41

2.2. Նորություններ ՖՀՄՍ-ներում

- ՖՀՄՍ-16 Վարձակալություն ----- 42

2.3. «2020թ. լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի երկրորդ փուլը և առաջին փուլի արդյունքները ----- 45

III. ԿԱՐԴԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

3.1. Պաշտոններն ըստ աշխատանքի նկարագրության և աշխատանքի անվտանգության Ցանցային ադմինիստրատորի աշխատանքի նկարագրությունը և անվտանգության հրահանգը ----- 51

3.2. «2020թ. ՀՀ մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ» անվանակարգում հայտարարված մրցույթի երկրորդ փուլը և առաջին փուլի արդյունքները ----- 59

IV. ՀԱՐՉ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ----- 64

Գրանցված է 11.02.2005թ.,
Պետական գրանցման
վկայական՝ N 03U067699,
տրված՝ 14.02.2005թ.
Տպագրվում է 2010թ.-ից
Տպաքանակը՝ 910
Գինը՝ պայմանագրային
Տպագրության է տրվել 19.05.2020թ.

Գովազդային նյութերի բովանդակության
համար խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում:

Լրատվական գործունեություն
իրականացնող՝ «Գործք» ՍՊԸ

Տպագրվել է՝ «ԱՆՏԵՆՈՐ» տպարանում
Ձևավորող՝ Լևոն Ամիրջյան, Ռուզաննա Շավարշյան

Խմբագրության հասցեն՝
ք. Երևան, Սարմենի 1, 2/1 տարածք
հեռ.՝ (010) 56-72-93
www.gortsq.am, press@gortsq.am





ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔԵՐՈՒՄ

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

Տեղեկանք

- ✓ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004թ. նոյեմբերի 9-ին ընդունված ՀՀ աշխատանքային օրենսգրքում (այսուհետ՝ ՅՕ-124-Ն Օրենսգիրք) լրացումներ և փոփոխություններ են կատարվել 2020թ. ապրիլի 29-ին, որը ստորագրվել է 2020թ. մայիսի 5-ին: Հաշվառման համարը՝ ՅՕ-236-Ն օրենք:
- ✓ ՅՕ-124-Ն Օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ են կատարվել 33 անգամ:
- ✓ 2020թ. ապրիլի 29-ին ընդունված ՅՕ-236-Ն օրենքով՝
 - ՅՕ-124-Ն Օրենսգիրքը լրացվել է 33.1-ին¹, 106.1-ին, 187.1-ին հոդվածներով.
 - փոփոխություններ են կատարվել ՅՕ-124-Ն Օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասում, 186-րդ, 220-րդ հոդվածներում.
 - լրացումներ են կատարվել ՅՕ-124-Ն Օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասում, 146-րդ հոդվածի 1-ին մասում, 186-րդ հոդվածում²:
- ✓ 2020թ. ապրիլի 29-ին ընդունված ՅՕ-236-Ն օրենքն ուժի մեջ է մտել 2020թ. մայիսի 8-ից:
- ✓ ՅՕ-124-Ն Օրենսգրքում կատարված փոփոխությունների և լրացումների հիման վրա կազմված ինկորպորացված տարբերակում փոփոխությունները ներկայացվում են հին տարբերակի վրա գիծ քաշելու ձևով, լրացումները՝ գունավորված:

ԼՐԱՑՈՒՄ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

Տեղեկանք

- ✓ Պերագույն խորհրդի կողմից 1985թ. դեկտեմբերի 6-ին ընդունված Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացում է կատարվել 2020թ. ապրիլի 29-ին, որը ստորագրվել է 2020թ. մայիսի 5-ին: Հաշվառման համարը՝ ՅՕ-237-Ն օրենք:
- ✓ Օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ են կատարվել 252 անգամ:
- ✓ 2020թ. ապրիլի 29-ին ընդունված ՅՕ-237-Ն օրենքով՝
 - Օրենսգիրքը լրացվել է 230.1-ին հոդվածով.
- ✓ 2020թ. ապրիլի 29-ին ընդունված ՅՕ-237-Ն օրենքն ուժի մեջ է մտել 2020թ. մայիսի 8-ից և գործում է մինչև 2021թ. հունիսի 1-ը:
- ✓ Օրենսգրքում կատարված լրացման հիման վրա կազմված ինկորպորացված տարբերակում լրացումը ներկայացվում է գունավորված:

¹ Լրացումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և գործում է մինչև 2021 թվականի հունիսի 1-ը:
² ՅՕ-124-Ն օրենսգրքի 186-րդ հոդվածի 1-ին մասում կատարված լրացումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2020 թվականի մարտի 16-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆԱԳՐՔԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվի առնելով աշխարհում և ՀՀ-ում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման դեպքերը, այդ վարակը Առողջապահության համաշխարհային կազմակերպության ղեկավարի՝ 2020թ. մարտի 13-ի հայտարարությամբ որպես պանդեմիա որակելու հանգամանքը և այդ կապակցությամբ 2020թ. մարտի 16-ին ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարվելու հանգամանքը՝ առաջացել է անհրաժեշտությունը ՀՀ աշխատանքային և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերի կարգավորումներում նախատեսել որոշակի փոփոխություններ և լրացումներ:

Ներկայումս ՀՀ աշխատանքային օրենսգրքում ամրագրված չեն այնպիսի ուղղակի դրույթներ, որոնց համաձայն տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքների (պարզաբանման մեջ այսուհետ՝ արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքներ) կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածներում, աշխատանքները, աշխատանքի բնույթով պայմանավորված, հնարավոր լինի իրականացնել հեռավար եղանակով:

Մյուս կողմից, ներկա իրավիճակում աշխատողների համար կարող է օբյեկտիվ պատճառներով հնարավոր չլինել ժամանակին, լրիվ աշխատանքային օրով կամ, ընդհանրապես, աշխատանքի ներկայանալը: Նման դեպքերում Օրենսգրքի գործող կարգավորումների համաձայն, գործատուն իրավունք ունի աշխատողի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ ընդհուպ մինչև աշխատանքային պայմանագրի լուծում:

Պարզաբանվող օրենքով վերոհիշյալ հարցերի վերաբերյալ ընդունվել են տարբեր իրավակարգավորումներ:

Միաժամանակ, պարզաբանվող օրենքի ուժով ուժեղացվել է պետական հսկողությունը աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանության հարցում: Այդ նպատակով ոլորտի լիազորված տեսչական մարմնին՝ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին վերապահվել է գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողությունը՝ օրենքով նախատեսված դեպքերում կիրառելով պատասխանատվության միջոցներ: Այդ կապակցությամբ համապատասխան լրացում է կատարվել նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում:

Մասնավորապես՝ պարզաբանվող օրենքով սահմանվել է հեռավար եղանակով իրականացվող աշխատանք հասկացությունը.

1. հեռավար եղանակով աշխատանքների կազմակերպման հնարավորության պարագայում աշխատողներին չհամարել պարապուրդի մեջ, և աշխատավարձն ամբողջությամբ պահպանել.
2. հեռավար եղանակով աշխատանքների կազմակերպումը և աշխատանքի ու հանգստի ռեժիմի փոփոխությունը չհամարել աշխատանքային պայմանագրի էական պայմանի փոփոխություն, ինչը հնարավորություն կտա գործատուներին լինել ավելի ճկուն և նախապես չժամուցել այդ փոփոխությունների մասին.
3. տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքների կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումը, որոնց

դեպքում հնարավոր չէ իրականացնել աշխատանքային պարտականությունները, համարել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 186-րդ 6-րդ մասով սահմանված անհաղթահարելի ուժ:

4. վերացվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 186-րդ հոդվածի երկու իմպերատիվ կարգավորում, ըստ որի՝
 - ոչ աշխատողի մեղքով հարկադիր պարապուրդի դեպքում աշխատողին վճարվում էր մինչև պարապուրդը նրա միջին ժամային աշխատավարձի երկու երրորդը: Կատարված փոփոխությամբ գործատուն ցանկության դեպքում կվճարի ավելին, քան մինչև պարապուրդը աշխատողի միջին ժամային աշխատավարձի երկու երրորդն է: Այս կարգավորման մասով պարզաբանվող օրենքով տրվել է նաև հետադարձ ուժ:
 - ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհաղթահարելի ուժ համարվող պատճառներով առաջացած պարապուրդի համար գործատուն ոչ թե չի վճարում այլ կարող է չվճարել: Այս փոփոխությամբ գործատուն, ցանկության դեպքում, կարող է անհաղթահարելի ուժ համարվող պատճառներով առաջացած պարապուրդի ժամանակ վճարել աշխատողին:
5. գործատուի համար նախատեսվել է կատարման ենթակա պարտադիր պայման, ըստ որի՝ աշխատողի պահանջով կտրամադրվի չօգտագործված արձակուրդը այն դեպքերում, երբ աշխատողն ունի չօգտագործված արձակուրդ և եթե հնարավոր չէ շարունակել աշխատանքները տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքների կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում կամ էլ բացակայում է աշխատանքները հեռավար անցկացնելու հնարավորությունը:
6. գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման արգելք է սահմանվել տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում, եթե, այդ դեպքերով պայմանավորված, աշխատողը չի ներկայացել աշխատանքի, ինչպես նաև ուսումնական (այդ թվում՝ նախադպրոցական) հաստատությունների համար նախատեսված արձակուրդների չպլանավորված տեղափոխման կամ չպլանավորված տրամադրման ժամանակահատվածում, եթե մինչև տասներկու տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով աշխատողը չի ներկայացել աշխատանքի:
7. սահմանվել է, որ տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքների կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում այդ դեպքերով պայմանավորված աշխատողի աշխատանքի չներկայանալը կամ ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատանքի ներկայանալը, ինչպես նաև ուսումնական (այդ թվում՝ նախադպրոցական) հաստատությունների համար նախատեսված արձակուրդների՝ չպլանավորված տեղափոխման կամ չպլանավորված տրամադրման ժամանակահատվածում մինչև տասներկու տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով աշխատողի աշխատանքի չներկայանալը կամ ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատանքի ներկայանալը չեն համարվում աշխատանքային կարգապահության խախտում, և չեն կարող այդ դեպքերի համար կիրառվել կարգապահական տույժեր:
8. տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքների կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում այդ դեպքերով պայմանավորված աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու կամ ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատանքի ներկայանալու դեպքում վարձատրել առնվազն փաստացի աշխատած ժամանակին կամ կատարված փաստացի աշխատանքին համապատասխան:

9. ուսումնական (այդ թվում՝ նախադպրոցական) հաստատությունների համար նախատեսված արձակուրդների՝ չալանավորված տեղափոխման կամ չալանավորված տրամադրման ժամանակահատվածում մինչև 12 տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով՝ վարձատրել ամբողջությամբ, եթե բացակայությունը աշխատանքային օրվա ընթացքում չի գերազանցում երկու ժամը, իսկ 2 ժամը գերազանցելու կամ ամբողջ աշխատանքային օրը աշխատանքի չներկայանալու դեպքում վարձատրել առնվազն փաստացի աշխատած ժամանակին կամ կատարված փաստացի աշխատանքին համապատասխան:
10. նախատեսվել է, որ պետության պաշտպանության, ինչպես նաև տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների վերացման համար կատարվող աշխատանքի դեպքում արտաժամյա աշխատանքը իրար հաջորդող երկու օրվա ընթացքում կարող է կազմել մինչև 8 ժամ՝ ներկայիս 4 ժամի փոխարեն:
11. սահմանվել է, որ տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքների կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում անձանցից ստացված բողոքի կամ իրավախախտումների վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված տեղեկության առկայության դեպքում ոլորտի լիազորված տեսչական մարմինը իրականացնում է գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողությունն օրենքով նախատեսված դեպքերում կիրառելով պատասխանատվության միջոցներ:

Այսպես՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

Ընդունված է 2004 թվականի նոյեմբերի 9-ին

Բ Ա Ժ Ի Ն 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գ Լ ՈՒ Խ 5

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՄԱՆ ՆԿԱՏԱԱՄԲ

ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

«Հոդված 33.1. Տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների վերացման ժամանակահատվածում աշխատանքային օրենսդրության նկատմամբ պետական վերահսկողությունը³

1. Տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների վերացման ժամանակահատվածում ստացված գրավոր դիմումի առկայության դեպքում ոլորտի լիազորված տեսչական մարմինն իրականացնում է գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ

³ Հոդված 33.1-րդն ուժի մեջ է մտնում 2020թ. մայիսի 8-ից և գործում է մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը:



պետական վերահսկողություն՝ օրենքով նախատեսված դեպքերում կիրառելով պատասխանատվության միջոցներ⁴»:

(33.1-ին հոդվածը լրաց. 29.04.20 ՅՕ-236-Ն)

(29.04.20 ՅՕ-236-Ն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ 33.1-ին հոդվածը գործում է մինչև 01.07.2021 թվականը)

Բ Ա Ժ Ի Ն 3

ԱՆՀԱՏԱՎԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ Լ ՈՒ Խ 14

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Հոդված 106. Աշխատանքի պայմանների ժամանակավոր փոփոխումը հատուկ դեպքերում

1. Գործատուն իրավունք ունի անհատական իրավական ակտի հիման վրա աշխատողին մինչև մեկ ամիս ժամկետով նույն աշխատավայրում փոխադրելու աշխատանքային պայմանագրով չնախատեսված այլ աշխատանքի և (կամ) նույն ժամկետով փոփոխելու աշխատանքային պայմանագրի սույն օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 6-րդ կետերով սահմանված պայմանները՝ տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքների կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման նպատակով:

«1. Գործատուն իրավունք ունի անհատական իրավական ակտի հիման վրա աշխատողին մինչև մեկ ամիս ժամկետով նույն աշխատավայրում փոխադրելու աշխատանքային պայմանագրով չնախատեսված այլ աշխատանքի և (կամ) նույն ժամկետով փոփոխելու աշխատանքային պայմանագրի սույն օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ⁵, 6-րդ⁶ և 11-րդ⁷ կետերով սահմանված պայմանները՝ տարերային աղետներով, տեխնոլոգիական վթարներով, համաճարակներով, դժբախտ պատահարներով, հրդեհներով և արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքներով պայմանավորված, ինչպես նաև դրանց կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման նպատակով»:

2. Արգելվում է աշխատողին փոխադրել նրա առողջական վիճակին հակացուցված աշխատանքի:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում աշխատանքի վարձատրությունը կատարվում է կատարված աշխատանքին համապատասխան: Եթե այլ աշխատանքի փոխադրման դեպքում աշխատողից անկախ պատճառներով նրա աշխատավարձը նվազում է, ապա պահպանվում է նրա նախկին աշխատանքի վերջին ամսվա աշխատավարձի չափը:

(106-րդ հոդվածը փոփ. 24.06.10 ՅՕ-117-Ն, լրաց., փոփ. 22.06.15 ՅՕ-96-Ն, խմբ. 29.04.20 ՅՕ-236-Ն)

«Հոդված 106.1. Տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում աշխատանքային պարտականությունների ժամանակավոր կատարումը հեռավար եղանակով

1. Հեռավար եղանակով իրականացվող աշխատանքը տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ

4 ՀՀ կառավարության 2019թ. օգոստոսի 22-ի N 1071-Ա որոշմամբ ոլորտի լիազորված տեսչական մարմին է ճանաչվել առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը:

5 Խոսքը վերաբերում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված կառուցվածքային ստորաբաժանումը (դրա առկայության դեպքում):

6 Խոսքը վերաբերում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պաշտոնի անվանմանը և (կամ) աշխատանքային գործառնություններին:

7 Խոսքը վերաբերում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում նշված աշխատաժամանակի ռեժիմին:

կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում ոչ աշխատանքի վայրից իրականացվող աշխատանքն է, այն դեպքում, երբ այդ դեպքերով պայմանավորված հնարավոր չէ ապահովել աշխատանքի վայրում այդ աշխատանքների իրականացումը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում հեռավար եղանակով աշխատանքի իրականացումը սույն օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով չի համարվում աշխատանքի վայրի կամ աշխատանքի էական այլ պայմանի փոփոխություն:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում, եթե հնարավոր չէ շարունակել աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները, այդ թվում՝ հեռավար եղանակով, ապա չօգտագործված ամենամյա արձակուրդ ունենալու պարագայում աշխատողի պահանջով գործատուն աշխատողին տրամադրում է ամենամյա արձակուրդ»:

(106.1-ին հոդվածը լրաց. 29.04.20 ՀՕ-236-Ն)

Գ Լ ՈՒ Խ 15

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Հոդված 114. Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելքը

1. Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ արգելվում է՝

1) աշխատողի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված դեպքերի.

2) աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում.

2.1) հղի կանանց հետ՝ հղիության մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո մեկ ամիսը լրանալը.

2.2) երեխային փաստացի խնամող՝ արձակուրդում չգտնվող անձի՝ մինչև մեկ տարեկան երեխա խնամելու ամբողջ ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերով նախատեսված դեպքերի.

3) գործադուլ հայտարարելու մասին որոշումն ընդունելուց հետո և գործադուլի ընթացքում, եթե աշխատողն այդ գործադուլին մասնակցում է սույն օրենսգրքով սահմանված կարգով.

4) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աշխատողի վրա դրված պարտականությունների կատարման ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի.

«5) տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում, եթե, այդ դեպքերով պայմանավորված, աշխատողը չի ներկայացել աշխատանքի.

6) ուսումնական (այդ թվում՝ նախադպրոցական) հաստատությունների համար նախատեսված արձակուրդների չալանավորված տեղափոխման կամ չալանավորված տրամադրման ժամանակահատվածում, եթե մինչև տասներկու տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով աշխատողը չի ներկայացել աշխատանքի»:

2. Եթե աշխատողը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամանակահատվածների ավարտից հետո չի ներկայանում աշխատանքի, ապա գործատուն սույն գլխով նախատեսված հիմքերով կարող է լուծել աշխատանքային պայմանագիրը:

3. Կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման) հետևանքով աշխատանքային պայմանագիրը լուծելիս չեն կիրառվում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումները:

4. Աշխատանքային պայմանագրի լուծման օրինական պատճառ չի կարող համարվել՝

1) արհեստակցական միությանը անդամակցելը կամ ոչ աշխատանքային ժամերին, իսկ գործատուի համաձայնությամբ նաև աշխատանքային ժամերին արհեստակցական միության գործունեությանը մասնակցելը.

2) երբևէ աշխատողների ներկայացուցիչ հանդիսանալը.

3) օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի կամ կոլեկտիվ պայմանագրի խախտման համար գործատուին պահանջներ ներկայացնելը.

4) սեռը, ռասան, ազգությունը, լեզուն, ծագումը, քաղաքացիությունը, սոցիալական դրությունը, դավանանքը, անուսնական վիճակը և ընտանեկան դրությունը, համոզմունքները կամ տեսակետները, կուսակցություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելը.

5) տարիքը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

(114-րդ հոդվածը լրաց., փոփ., խմբ. 24.06.10 ՅՕ-117-Ն, խմբ. 22.06.15 ՅՕ-96-Ն, լրաց. 29.04.20 ՅՕ-236-Ն)

Գ Լ ՈՒ Խ 17 ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ

Յոդված 146. Արտաժամյա աշխատաժամանակի տևողությունը

1. Գործատուի պահանջով արտաժամյա աշխատանքը իրար հաջորդող երկու օրվա ընթացքում չպետք է գերազանցի 4 ժամը, իսկ տարվա ընթացքում՝ 180 ժամը, **«բացառությամբ սույն օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված դեպքերի, որոնց առկայության պայմաններում արտաժամյա աշխատանքն իրար հաջորդող երկու օրվա ընթացքում չպետք է գերազանցի 8 ժամը, որի պարագայում պետք է պահպանվեն սույն օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված օրական և շաբաթական աշխատաժամանակի առավելագույն տևողությունները»:**

(պարբերությունն ուժը կորցրել է 24.06.10 ՅՕ-117-Ն)

2. (մասն ուժը կորցրել է 22.06.15 ՅՕ-96-Ն)

(146-րդ հոդվածը փոփ. 24.06.10 ՅՕ-117-Ն, 22.06.15 ՅՕ-96-Ն, լրաց. 29.04.20 ՅՕ-236-Ն)

Գ Լ ՈՒ Խ 19 ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Յոդված 186. Վճարումը պարապուրդի ժամանակ

1. Եթե ոչ աշխատողի մեղքով պարապուրդի ժամանակ աշխատողին չի առաջարկվում նրա մասնագիտությանը, որակավորմանը համապատասխանող այլ աշխատանք, որը նա կարող էր կատարել առանց իր առողջությանը վնաս պատճառելու, ապա աշխատողին պարապուրդի յուրաքանչյուր ժամվա համար վճարվում է մինչև պարապուրդը նրա միջին ժամային աշխատավարձի **«առնվազն⁸»** երկու երրորդի չափով, սակայն ոչ պակաս, քան օրենսդրությամբ սահմանված նվազագույն ժամային դրույքաչափը:

2. Եթե ոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի ընթացքում աշխատողն իր համաձայնությամբ ժամանակավորապես փոխադրվում է ավելի ցածր աշխատավարձով, սակայն իր մասնագիտությանը, որակավորմանը համապատասխանող և առողջական վիճակին վնաս չպատճառող մեկ այլ աշխատանքի, ապա յուրաքանչյուր ժամի համար աշխատողին վճարվում է պարապուրդի ամսվան նախորդող նրա ժամային դրույքաչափով:

3. Եթե աշխատողը հրաժարվում է առաջարկված ժամանակավոր աշխատանքից, որը համապատասխանում է նրա մասնագիտությանը և որակավորմանը, և որը նա կարող էր կատարել առանց իր առողջությանը վնաս պատճառելու, ապա պարապուրդի յուրաքանչյուր ժամի համար նրան վճարվում է

⁸ Այս լրացումն ուժի մեջ է մտնում 2020թ. մայիսի 8-ից և տարածվում է 2020թ. մարտի 16-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

սահմանված նվազագույն ժամային դրույքաչափի երեսուն տոկոսից ոչ պակաս:

4. Պարապուրդի ժամանակ գործատուի պահանջով աշխատավայրում գտնվելու համար աշխատողին վճարվում է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված չափով աշխատավարձ:

5. Կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրով կարող են նախատեսվել դեպքեր, երբ աշխատողը կարող է պարապուրդի ժամանակ ընդհանրապես չներկայանալ աշխատանքի:

6. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհաղթահարելի ուժ համարվող պատճառներով առաջացած, ինչպես նաև աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի համար **չի վճարվում «կարող է չվճարվել»:**

«7. Տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների ու ազատությունների՝ օրենսդրությամբ ժամանակավոր սահմանափակումը, որոնց դեպքում հնարավոր չէ իրականացնել աշխատանքային պարտականությունները, այդ թվում՝ հեռավար եղանակով, համարվում է սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված անհաղթահարելի ուժ:»:

(186-րդ հոդվածը լրաց., փոփ. 29.04.20 ՀՕ-236-Ն)

(29.04.20 ՀՕ-236-Ն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի լրացումն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2020 թ. մարտի 16-ից հետո ծագած հարաբերությունների վրա)

«Հոդված 187.1. Հատուկ դեպքերում աշխատանքի վարձատրությունը

1. Եթե տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում այդ դեպքերով պայմանավորված՝ աշխատողը չի ներկայացել աշխատանքի կամ աշխատանքի է ներկայացել ոչ լրիվ աշխատանքային օրով, ապա աշխատանքը վարձատրվում է առնվազն փաստացի աշխատած ժամանակին կամ կատարված փաստացի աշխատանքին համապատասխան:

2. Ուսումնական (այդ թվում՝ նախադպրոցական) հաստատությունների համար նախատեսված արձակուրդների չալանավորված տեղափոխման կամ չալանավորված տրամադրման ժամանակահատվածում մինչև տասներկու տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատանքի ներկայանալու դեպքում աշխատողի աշխատավարձն ամբողջությամբ պահպանվում է, եթե աշխատանքային օրվա ընթացքում աշխատողը բացակայել է մինչև երկու ժամ: Սույն մասում նշված դեպքերում աշխատանքային օրվա ընթացքում երկու ժամից ավելի բացակայելու, ինչպես նաև ամբողջ աշխատանքային օրն աշխատանքի չներկայանալու դեպքում աշխատանքը վարձատրվում է առնվազն փաստացի աշխատած ժամանակին կամ կատարված փաստացի աշխատանքին համապատասխան:

3. Սույն օրենսգրքի 106.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում աշխատողի աշխատավարձն ամբողջությամբ պահպանվում է»:

(187.1-ին հոդվածը լրաց. 29.04.20 ՀՕ-236-Ն)

Գ Լ ՈՒ Խ 21

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 220. Աշխատանքային կարգապահության խախտումը

Աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:



«Հոդված 220. Աշխատանքային կարգապահության խախտումը

1. Աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

2. Աշխատանքային կարգապահության խախտում չեն համարվում՝

1) տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում այդ դեպքերով պայմանավորված՝ աշխատողի աշխատանքի չներկայանալը կամ ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատանքի ներկայանալը:

2) ուսումնական (այդ թվում՝ նախադպրոցական) հաստատությունների համար նախատեսված արձակուրդների չալանավորված տեղափոխման կամ չալանավորված տրամադրման ժամանակահատվածում մինչև տասներկու տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով աշխատողի աշխատանքի չներկայանալը կամ ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատանքի ներկայանալը»:

(220-րդ հոդվածը խմբ. 29.04.20 ՀՕ-236-Ն)

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ**

ՀԱՏՎԱԾ III

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐ ՔՆՆԵԼՈՒ ՀԱՍԱՐ
ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ**

Գ Լ ՈՒ Խ 17

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

«Հոդված 230.1. Տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների վերացման ժամանակահատվածում աշխատանքային օրենսդրության նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը

1. Տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների վերացման ժամանակահատվածում ստացված գրավոր դիմումի առկայության դեպքում գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնելիս Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը քննում է սույն օրենսգրքի 41-րդ, 41.1-ին, 41.6-րդ, 96.1-ին հոդվածներով, 158-րդ հոդվածի 19-րդ մասով, 169.5-րդ հոդվածով (իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում), 169.8-րդ, 198-րդ հոդվածներով, 201-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը և նշանակում վարչական տույժեր:»:

(230.1-ին հոդվածը լրաց. 29.04.20 ՀՕ-237-Ն)

(29.04.20 ՀՕ-237-Ն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ 230.1-ին հոդվածը գործում է մինչև 01.07.2021 թվականը:)

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ...

ԵԹԵ



Ունեք հարց, որին կարող է պատասխանել պետական մարմինը



Ունեք խնդիր, որը կարող է լուծել պետական մարմինը



Գուցե խախտվել են Ձեր իրավունքներն ու ազատությունները և Դուք ունեք բողոք



ԱՊԱ ԿԱՐՈՂ ԵՔ



ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ

ՊԱՏՐԱՍՏԵԼ ՆԱՄԱԿԻ
ԲՈՎՆԱԴԱՎՈՒԹՅՈՒՆ

1

1 ժամ

ԿԱԶՄԵԼ ՆԱՄԱԿԻ ՓԱԹԵԹԸ

2

1 ժամ

ԱՅՑԵԼԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

3

0,5-1 ժամ

ՍՊԱՍԵԼ ՀԵՐԹՈՒՄ ՆԱՄԱԿԻ ՓԱԹԵԹԸ
ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

4

5 րոպե

ՀԱՆՁՆԵԼ ՆԱՄԱԿԸ

5

Մինչև 30 օր

ՍՊԱՍԵԼ ԹՂԹԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԻՆ

6

E-REQUEST.AM ՀԱՐԹԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ

ՀԱՐԹԱԿՈՒՄ ՇԱՐՎԴՐԵԼ ՆԱՄԱԿԸ,
ԿՑԵԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ
ՈՒՂԱՐԿԵԼ

1

10 րոպե

ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՄԿԻՉ ՀԱՄԱՐՈՎ ՍՏՈՒԳԵԼ
ՆԱՄԱԿԻ ԸՆԹԱՑՔԸ (ԵՐԲ ՑԱՆԿԱՄԵ)

2

Մինչև 30 օր

ՏԵՄԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՀԵՆՑ ՀԱՐԹԱԿՈՒՄ
ԿԱՄ ՍՏԱՆԱԼ ԱՅՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏԻՆ

3



Ձեր խնայած ժամանակը

ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻՑ...

Ս.Ա. - «Չգիտեի՝ իմ խնդրով որ մարմին դիմեմ, հարթակի միջոցով դիմել եմ երևանի քաղաքապետարան, սոց. նախարարություն և առողջապահության նախարարություն՝ առանց այդ մարմիններ այցելելու: Հարթակը հարմար է և հեշտ կիրառելի»:

Լրագրող - «Հարցերս վերաբերում էին տարբեր ոլորտների և ունեի հրատապ պատասխանի խնդիր: Հարթակի միջոցով դիմել եմ և՛ Կառավարությանը, և՛ Ազգային ժողովին, և՛ Կադաստրի կոմիտե, և՛ Քաղաքաշինության կոմիտե: Հնարավորություն ունեցա կարճ ժամանակում գտնել հարցիս պատասխանը»:

Թոշակառու. - «Հարթակով դիմել եմ սոց.ապ նախարարությանը և առանց անմիջական շփման կարողացել եմ դիմել և փոփոխել թոշակիս ստացման եղանակը՝ առցանց եղանակով»:

Հաշվապահ - «Շատ արագ հարթակով ստացել եմ եկամտային հարկի մասին իմ հարցի պատասխանը»:

ՇՈՒՏՈՎ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ...

Շուտով գործատուները կկարողանան աշխատողներին պաշտոնական ծանուցումներ ուղարկել պետության կողմից անվճար տրամադրվող @e-citizen.am պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով: Այս գործիքի հնարավորությունների և գործատուի կողմից պատշաճ ծանուցման մասին կխոսենք առաջիկայում:



ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ



Տեղեկանք

- ✓ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016 թվականի հոկտեմբերի 4-ին ընդունված ՀՀ հարկային օրենսգրքում (այսուհետ՝ ՅՕ-165-Ն Օրենսգրք) փոփոխություն և լրացում է կատարվել 2020թ. ապրիլի 22-ին, որը ստորագրվել է 2020թ. ապրիլի 27-ին: Հաշվառման համարը՝ ՅՕ- 220 -Ն օրենք¹:
- ✓ ՅՕ-165-Ն օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ են կատարվել 32 անգամ:
- ✓ 2020թ. ապրիլի 22-ին ընդունված ՅՕ- 220-Ն օրենքով՝
 - փոփոխություն է կատարվել ՅՕ-165-Ն օրենսգրքի 401-րդ հոդվածում².
 - լրացում է կատարվել ՅՕ-165-Ն օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին մասում:
- ✓ 2020թ. ապրիլի 22-ին ընդունված ՅՕ-220-Ն օրենքն ուժի մեջ է մտել 2020թ. մայիսի 15-ից:
- ✓ ՅՕ-165-Ն Օրենսգրքում կատարված փոփոխությունների հիման վրա կազմված ինկորպորացված տարբերակում փոփոխությունը ներկայացվում է հին տարբերակի վրա գիծ քաշելու ձևով, լրացումը՝ գունավորված:

Պարզաբանում N1

Օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի վերաբերյալ (մինչև 13.05.2020թ. գործող խմբագրության)

Եթե կազմակերպությունն Օրենսգրքով սահմանված ժամկետից ուշ է վճարում 10 հազ. ՀՀ դրամ հարկային պարտավորությունները, օրինակ՝ 25 օր, ապա կկիրառվի տույժ՝ $187,5 (10000 * 0,075\% * 25)$ ՀՀ դրամ:

Եթե կազմակերպությունն ունեցել է 01.01.2020թ. դրությամբ 10 հազ. ՀՀ դրամ հարկային պարտավորություն, ապա մինչև 01.01.2020թ. տույժերը հաշվարկվել են 0,15 տոկոսի չափով, սակայն 01.01.2020թ.-ից հետո դրանք հաշվարկվելու են 0,075 տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկը կկատարվի մինչև 365 օրվա լրանալը (Օրենսգրքի 447-րդ հոդվածի 7-րդ մաս):

Պարզաբանում N2

Օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի վերաբերյալ (14.05.2020թ.-ից գործող խմբագրության)

Եթե կազմակերպությունն Օրենսգրքով սահմանված ժամկետից ուշ է վճարում 10 հազ. ՀՀ դրամ հարկային պարտավորությունները, օրինակ՝ 25 օր, ապա կկիրառվի տույժ՝ $100 (10000 * 0,04\% * 25)$ ՀՀ դրամ:

1 Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը տույժը վճարում է 0.04 տոկոսի չափով, այդ թվում՝ նաև այն դեպքում, եթե տույժերի հաշվարկն սկսվել է մինչև օրենքն ուժի մեջ մտնելը:

2 ՅՕ-165-Ն Օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափը կիրառվում է ՅՕ- 220-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարկ վճարողի գույքի վրա արգելանք կիրառելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 4-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍՊԻՐՔ

Բ Ա Ժ Ի Ն 18

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԵՆՍՊԻՐՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Գ Լ ՈՒ Խ 77

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 401. Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելը

1. Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ **0.075 «0.04»** տոկոսի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարի (այդ թվում՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային գումարների, հարկային հսկողության արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար:

3. Սույն հոդվածով սահմանված կարգով տույժեր են հաշվարկվում նաև այն դեպքերում, երբ՝

1) Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետով սահմանված մասնագիտական հանձնաժողովը փոփոխում կամ կասեցնում է արտոնյալ որակված սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի որոշումները՝ դրանց շրջանակներում պակաս վճարված կամ չվճարված ԱԱՀ-ի գումարների նկատմամբ:

2) Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 37-րդ կետով սահմանված՝ լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ ունեցող հարկ վճարողի կողմից ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկվող ԱԱՀ-ի գումարների նկատմամբ՝ սկսված ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների համար ԱԱՀ-ի գումարների վճարման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետին հաջորդող օրվանից, եթե այդ ապրանքները կամ դրանց վերանշակման արդյունքում ստացված ապրանքները ներմուծման օրվանը հաջորդող 180 օրվա ընթացքում չեն վերաարտահանվում Հայաստանի Հանրապետության տարածքից:

(401-րդ հոդվածը փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն, 22.04.20 ՀՕ-220-Ն)

(22.04.20 ՀՕ-220-Ն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ 2020 թվականի ապրիլի 21-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը տույժը վճարում է 0.04 տոկոսի չափով, այդ թվում՝ նաև այն դեպքում, եթե տույժերի հաշվարկն սկսվել է մինչև 22.04.20 ՀՕ-220-Ն օրենքն ուժի մեջ մտնելը:)

Բ Ա Ժ Ի Ն 19

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Գ Լ ՈՒ Խ 78

ԳՈՒՅՔԻ ԱՐԳԵԼԱՆՔԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԳՈՒՅՔԸ ԱՐԳԵԼԱՆՔԻՑ ՀԱՆԵԼԸ

Հոդված 430. Գույքի արգելանքի կիրառության հիմքերը

1. Չկատարված հարկային պարտավորության չափը «1միլիոն» 500 հազար դրամ կամ ավելի կազմելու դեպքում, եթե հարկային մարմնի իրականացրած վարչարարության ընթացքում արդեն իսկ ձեռք բերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ հարկ վճարողը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել հարկային մարմնի ընդունած իրավական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը, ապա հարկային մարմնի ղեկավարը Օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին հանձնարարագիր հրապարակելու:

2. Հարկային մարմնի կողմից գույքի արգելանքը կարող է կիրառվել միայն հարկային մարմնի կողմից վերահսկվող հարկային պարտավորության կատարումն ապահովելու նպատակով: Արգելանքի ենթակա է միայն այն գույքը, որն անհրաժեշտ է հարկային պարտավորության կատարումն ապահովելու համար՝ հարկային պարտավորությունների չափով: Հարկային մարմնի կողմից գույքի արգելանքը դրվում է հարկ վճարողի գույքի վրա՝ անկախ այն հանգամանքից, թե ում մոտ է այն գտնվում: Արգելանքը չի կարող կիրառվել այն գույքի նկատմամբ, որի վրա օրենքով բռնագանձում չի կարող տարածվել, կամ որի պահպանման ժամկետը արգելանք դնելու պահին պակաս է երեք ամսից: Արգելանք չի կարող դրվել բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, ներդրումային ֆոնդերի (այդ թվում՝ կենսաթոշակային ֆոնդերի) և ապահովագրական (վերաապահովագրական) ընկերությունների բանկային, դեպո կամ կենսաթոշակային հաշիվների և դրամական միջոցների վրա:

(430-րդ հոդվածը լրաց. 22.04.20 փոփ. ՀՕ -220 -Ն)

(22.04.20 ՀՕ-220-Ն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի 2-րդ հոդվածին համապատասխան՝ Օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափը կիրառվում է 22.04.20 ՀՕ-220-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարկ վճարողի գույքի վրա արգելանք կիրառելու համար:)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ապրիլի 2020 թվականի N 642-L

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՋՈՔԱՑՄԱՆ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնհինգերորդ միջոցառումը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին՝ հնգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ սույն որոշումից բխող փոփոխություններ կատարելու առաջարկություններ:

2) սույն որոշմամբ սահմանված աշխատանքների կազմակերպման և իրականացման ու շահառուներին գումարի տրամադրման կարգը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

**2020թ. մայիսի 1
Երևան**

Ն. Փաշինյան

**Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
ապրիլի 30-ի N 642-L որոշման**

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՋՈՔԱՑՄԱՆ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնհինգերորդ միջոցառման (այսուհետ՝ միջոցառում) նպատակը բնապահպանական խնդիրներ լուծելու միջոցով գյուղատնտեսական ոլորտում ժամանակավոր աշխատատեղեր ստեղծելն է:

2. Միջոցառման շրջանակներում «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության, Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի և «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից կկազմակերպվեն ՀՀ բարձրադիր գոտիներում գետերի ափապաշտպան անտառաշերտերի հիմնման աշխատանքներ (այսուհետ՝ աշխատանքներ):

3. Աշխատանքները կներառեն ծառատնկման ենթակա գետերի համար քարտեզագրված հատվածներում տեղում աճող տեղական տեսակների ուռենու կտրոնների տնկման և ծառատունկի տարածքի ցանկապատման աշխատանքները:

4. Միջոցառման շահառու են հանդիսանում ՀՀ այն քաղաքացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր կմասնակցեն սույն հավելվածի 3-րդ կետում նշված աշխատանքներին:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար**

Է. Աղաջանյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 մայիսի 2020 թվականի N 658-L

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնվեցերորդ միջոցառումը՝ համաձայն հավելվածի:
2. Առաջարկել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ մինչև 2020 թվականի մայիսի 8-ը կազմակերպել միջոցառման իրականացումը:
3. Սույն միջոցառման իրականացման ընթացքում հավելվածին կից ցանկում կարող են իրականացվել ճշգրտումներ:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ
2020թ. մայիսի 4
երևան

Ն. Փաշինյան

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
մայիսի 4-ի N 658-L որոշման

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 մայիսի 2020 թվականի N 714-L

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՁՈՔԱՑՄԱՆ ՏԱՍՆՅՈՑԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնյոթերորդ միջոցառումը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարին՝

1) մինչև 2020թ. մայիսի 15-ը ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 24-ի N1937-Ն որոշման պահանջներին համապատասխան ձևավորել հավելվածի 4-րդ կետում նշված մրցութային հանձնաժողովները.

2) մինչև 2020թ. մայիսի 30-ը ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության պաշտոնական կայքում հրապարակել սույն որոշման հավելվածի 5-րդ կետում նշված՝ առնվազն առաջին մրցույթի հրավերը:

3. Համաֆինանսավորման դրամաշնորհների տրամադրման դեպքում չկիրառել ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 24-ի N1937-Ն որոշմամբ սահմանված ժամկետային սահմանափակումները՝ դրանք սահմանելով մրցութային հրավերով:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

**2020 թ. մայիսի 11
Երևան**

Ն. Փաշինյան

**Հավելված
ՀՀ կառավարության
2020թ. մայիսի 7-ի N 714-L որոշման**

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՁՈՔԱՑՄԱՆ ՏԱՍՆՅՈՑԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. Միջոցառման նպատակը կորոնավիրուսի տարածման հետևանքով ՀՀ բարձր տեխնոլոգիաների ոլորտի առանձին տնտեսավարողների մոտ առաջացած դժվարությունների հետևանքով արդյունավետ աշխատատեղերի պահպանությանն օժանդակելն է, ինչպես նաև ոլորտում նորարարական գաղափարների իրագործմանը և առևտրայնացմանը խթանելը:

2. Միջոցառման շահառու հանդիսանում են բարձր տեխնոլոգիաների ոլորտի այն տնտեսավարողները, որոնք՝

1) համապատասխանում են ,Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին ՀՀ օրենքում նշված չափանիշներին.

2) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջին 12 ամիսների ընթացքում չունեն հարկային և վարկային ժամկետանց պարտավորություններ.

3) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջին 12 ամսվա ընթացքում դրամաշնորհի չեն ստացել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից:

3. Աջակցությունը տրամադրվում է դրամաշնորհի ձևով՝ սույն հավելվածի 2-րդ կետում նշված շահառու հանդիսացող՝ մրցույթի արդյունքներով հաղթող տնտեսավարողներին:



4. Հայտերի գնահատումն իրականացնում են ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի հրամանով հաստատվող անկախ մասնագիտական մրցութային հանձնաժողովները, որոնք կազմված են ոլորտի ասոցիացիաներից, մասնագետներից և պետական շահառու գերատեսչությունների ներկայացուցիչներից:

5. Հայտերի գնահատումն իրականացվում է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից հրապարակվող մրցույթի հրավերով սահմանված կարգով՝ ըստ հանձնաժողովների կողմից նախօրոք մշակված չափորոշիչների և գնահատման սանդղակների՝ հաշվի առնելով ներկայացված ծրագրի նորարարությունը, համապատասխանությունը ՀՀ կառավարության ռազմավարական առաջնահերթություններին, իրագործելիությունը, ֆինանսական համապատասխանելիությունը, արտադրանքի իրացվելիությունը միջազգային շուկայում, տնտեսավարողի մասնագիտական ներուժը և այլ անհրաժեշտ չափորոշիչներ:

6. Մրցույթներին մասնակցող տնտեսավարողներին ներկայացվող հիմնական պայմաններն են՝

Դրամաշնորհի անվանումը	Դրամաշնորհի առավելագույն արժեքը	Մրցույթի շահառուների պայմանները
Նորարարական դրամաշնորհները	10.0 մլն դրամ	Վերջին 2 տարում ՀՀ-ում գրանցված և պրոդուկտներ ստեղծող տնտեսավարողներ
Կայացած ընկերությունների դրամաշնորհները	20.0 մլն դրամ	2 տարվանից ավելի ՀՀ-ում գրանցված և ծառայություններ մատուցող տեխնոլոգիական ընկերություններ (տնտեսավարողներ), որոնք պատրաստ են մշակել պրոդուկտներ
Համաֆինանսավորման դրամաշնորհները	100% չափով համաֆինանսավորում, սակայն ոչ ավելի, քան 30.0 մլն դրամ	Տեխնոլոգիական ընկերությունները (տնտեսավարողներ), որոնք կներգրավեն փաստաթղթավորված և հաստատված ներդրումներ

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավար

Է. Աղաջանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 մայիսի 2020 թվականի N 726-L

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՁՈՔԱՑՄԱՆ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնութերորդ-միջոցառումը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ մինչև 2020թ. մայիսի 15-ը ներկայացնել սույն որոշմամբ սահմանված միանվագ դրամաշնորհի տրամադրման կարգ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

2020 թ. մայիսի 12
Երևան

Ն. Փաշինյան

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
մայիսի 12-ի N 726-L որոշման

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՁՈՔԱՑՄԱՆ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. Միջոցառման նպատակն է օժանդակել կորոնավիրուսի տարածման հետևանքով ՀՀ առանձին տնտեսավարողների մոտ առաջացած դժվարությունների հետևանքով արդյունավետ աշխատատեղերի պահպանությանը:

2. Միջոցառման շահառու հանդիսանում են այն տնտեսավարողները (բացառությամբ բանկերի, վարկային կազմակերպությունների, գրավատների, ապահովագրական ընկերությունների, արտարժույթի փոխանակման կետերի, արժեթղթերի առքու վաճառքով զբաղվող կազմակերպությունների, ներդրումային կազմակերպությունների, ներդրումային ֆոնդերի, վիճակախաղերի և շահումով խաղերի կազմակերպիչների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, վճարահաշվարկային կազմակերպությունների, ապահովագրական բրոքերների, վարկային և ապահովագրական բյուրոների, պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետական կառավարչական հիմնարկների, համայնքային կառավարչական հիմնարկների, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների, հասարակական միավորումների, ոչ առևտրային կոոպերատիվների, կուսակցությունների), որոնք 2020թ. փետրվարի 1-ից մինչև 2020թ. ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում անընդհատ ունեցել են 2-100 վարձու աշխատակից, և նշված տնտեսավարողների կողմից հաշվարկված եկամուտների փաստացի ֆոնդը նշված ժամանակահատվածում չի նվազել, կամ նվազումը կազմել է ոչ ավել, քան 5 տոկոս: Ընդ որում, տնտեսավարողների աշխատակիցների քանակի և հաշվարկված եկամուտների հաշվարկման կարգը սահմանվում է սույն որոշման 2-րդ կետի հիման վրա ընդունված կարգով:

3. Սույն միջոցառման շահառուներին տրամադրվում է միանվագ դրամաշնորհ:

4. Միանվագ դրամաշնորհի չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԱԶ=(ԱՅ:ԱԲ)*(ԱԲ:5)$$

որտեղ՝

ԱԶ–պետության կողմից տրամադրվող աջակցության չափն է,

ԱՅ–տնտեսավարողի բոլոր աշխատողների համար հաշվարկված եկամուտների հանրագումարն է,

ԱԲ – տնտեսավարողի աշխատողների քանակն է,

ընդ որում (ԱԲ:5) բանաձևը կլորացվում է դեպի ներքև:

5. Սույն հավելվածի 4-րդ կետում նշված բանաձևը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

1) մինչև 5 աշխատակից ունեցող տնտեսավարողների պարագայում տնտեսավարողին տրամադրվող աջակցության չափը որոշելու համար 2020թ. մարտ ամսվա համար հաշվարկված եկամուտների հանրագումարը բաժանվում է աշխատակիցների թվին.

2) 5 և ավելի աշխատակից ունեցող տնտեսավարողների պարագայում տնտեսավարողին տրամադրվող աջակցության չափը որոշելու համար՝

ա. հաշվարկվում է տնտեսավարողի 2020թ. մարտ ամսվա ամսական միջին հաշվարկված եկամուտների չափը, այսինքն՝ 2020թ. մարտ ամսվա համար հաշվարկված եկամուտների հանրագումարը բաժանած աշխատակիցների թվին,

բ. հաշվարկվում է աշխատակիցների ընդհանուր թվի մեկ հինգերորդ մասը, այսինքն՝ աշխատակիցների ընդհանուր թիվը բաժանվում է 5-ի՝ կլորացումով դեպի ներքև,

գ. հաշվարկվում է սույն ենթակետի «ա» և «բ» պարբերությունների արդյունքների արտադրյալը և կլորացվում մինչև միավոր:

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավար

Է. Աղաջանյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ

20 փետրվարի 2020 թվականի N 189-Ն

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. 2020 թվականի մայիսի 29-ի աշխատանքային օրը տեղափոխել 2020 թվականի մայիսի 23-ը՝ շաբաթ օրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան

2020թ. փետրվարի 21
Երևան

Հրամանի օրինակելի ձև աշխատանքային օրը տեղափոխելու մասին

(հնգօրյա աշխատանքային շաբաթվա ռեժիմով աշխատող կազմակերպության համար)

**Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ ՈՒ Թ Յ Ա Ն Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը
Ե Վ Խ ՈՐ Հ Ր Դ Ա Պ Ա Տ Կ Ե Ր Ը
Տ Ն Օ Ր Ե Ն**

ՀՐԱՄԱՆ N __ - Լ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ¹

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ, 142-րդ և 144-րդ հոդվածների և ՀՀ կառավարության 2020թ. փետրվարի 20-ի «Աշխատանքային օրը տեղափոխելու մասին» N 189-Ն որոշման պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

- 2020թ. մայիսի 29-ի աշխատանքային օրը տեղափոխել 2020թ. մայիսի 23-ը՝ շաբաթ օրը:
- 2020թ. մայիսի 29-ը համարել ոչ աշխատանքային, իսկ 2020թ. մայիսի 23-ը՝ շաբաթ օրը, աշխատանքային օր:
- 2020թ. մայիսի 27-ի աշխատաժամանակի տևողությունը կրճատել մեկ ժամով՝ բացառությամբ կրճատ և ոչ լրիվ աշխատանքային ժամանակի պայմաններով աշխատող աշխատողների:
- Աշխատանքային օրվա տեղափոխության հետևանքով աշխատանքային շաբաթը 40 ժամը գերազանցող յուրաքանչյուր ժամի համար աշխատողին վճարել հավելում՝ ժամային դրույքաչափի 50 տոկոսի չափով:
- Կադրային քաղաքականության ստորաբաժանմանը (կադրերի բաժին, անձնակազմի կառավարման բաժին և այլն)՝
սույն հրամանի 1-ին կետում նշված օրվա տեղափոխությունը հաշվի առնել 2020թ. մայիս ամսվա աշխատաժամանակի հաշվառման N5 տեղեկագիրը կազմելիս:

¹ Ամիրաթեշտ է նկատի ունենալ, որ թե հնգօրյա և թե վեցօրյա աշխատանքային շաբաթվա ռեժիմով աշխատողների համար 2020թ. մայիսի 29-ի աշխատանքային օրը տեղափոխելով 2020թ. մայիսի 23-ի՝ շաբաթ օրը, մայիսի 18-ից մայիսի 29-ն ընկած ժամանակահատվածում աշխատաժամանակի տևողությունը շաբաթվա ընթացքում գերազանցում է շաբաթական 40 ժամը և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 144-րդ հոդվածի ուժով 40 ժամը գերազանցող մասով առաջանում է արտաժամ, որի համար գործատուն պարտավոր է աշխատողներին վճարել հավելում՝ ժամային դրույքաչափի 50 տոկոսից ոչ պակաս չափով (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 184-րդ հոդված):



6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հինք՝ 2020թ. _____ «___»-ին «_____» (նշել կազմակերպության անվանումը) աշխատողներին տրված ծանուցումը²:

Տնօրեն՝ _____
(ստորագրություն) _____
(անունը, ազգանունը)

«___» _____ 2020թ.
ք. _____

Հրամանի օրինակելի ձև աշխատանքային օրը տեղափոխելու մասին
(վեցօրյա աշխատանքային շաբաթվա ռեժիմով աշխատող կազմակերպության համար)

Կ Ա Ձ Մ Ա Կ Ե Ր Պ ՈՒ Թ Յ Ա Ն Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը
ԵՎ Խ ՈՐ Հ Ր Դ Ա Պ Ա Տ Կ Ե Ր Ը
Տ Ն Օ Ր Ե Ն

ՀՐԱՄԱՆ N __ - Լ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ, 142-րդ և 144-րդ հոդվածների և ՀՀ կառավարության 2020թ. փետրվարի 20-ի «Աշխատանքային օրը տեղափոխելու մասին» N189-Ն որոշման պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. 2020թ. մայիսի 29-ի աշխատանքային օրը տեղափոխել 2020թ. մայիսի 23-ը՝ շաբաթ օրը:
2. Վեցօրյա աշխատանքային շաբաթվա ռեժիմը մնում է անփոփոխ:
3. 2020թ. մայիսի 29-ի և 2020թ. մայիսի 23-ի աշխատանքային օրերի աշխատաժամերը տեղափոխել:
4. 2020թ. մայիսի 27-ի աշխատաժամանակի տևողությունը կրճատել մեկ ժամով՝ բացառությամբ կրճատ և ոչ լրիվ աշխատանքային ժամանակի պայմաններով աշխատող աշխատողների:
5. Աշխատանքային օրվա տեղափոխության հետևանքով աշխատանքային շաբաթը 40 ժամը գերազանցող յուրաքանչյուր ժամի համար աշխատողին վճարել հավելում՝ ժամային դրույքաչափի 50 տոկոսի չափով:
6. Կադրային քաղաքականության ստորաբաժանմանը (կադրերի բաժին, անձնակազմի կառավարման բաժին և այլն)՝

սույն հրամանի 1-ին կետում նշված օրվա տեղափոխությամբ պայմանավորված աշխատաժամանակի տևողությունը հաշվի առնել 2020թ. մայիս ամսվա աշխատաժամանակի հաշվառման N5 տեղեկագիրը կազմելիս:

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հինք՝ 2020թ. _____ «___»-ին «_____» (նշել կազմակերպության անվանումը) աշխատողներին տրված ծանուցումը³:

Տնօրեն՝ _____
(ստորագրություն) _____
(անունը, ազգանունը)

«___» _____ 2020թ.
ք. _____

² Ծանուցումը տրվում է՝

- ա) անհատապես՝ յուրաքանչյուր աշխատողին կամ.
- բ) կոլեկտիվի ընդհանուր ժողովում կամ արհմիութենական կազմակերպության ժողովում, որին ներկա են աշխատակազմի բոլոր անդամները կամ.
- գ) գործակարգավարական խորհրդակցությունում, որի ժամանակ հստակ հանձնարարություն է տրվում գործակարգավարական խորհրդակցության մասնակիցներին, որի իրենց ստորաբաժանումների աշխատողներին գրավոր ծանուցեն աշխատանքային օրերը տեղափոխելու մասին:

³ Տես տողակատակի 2-րդ գրառումը:

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ¹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020Թ. ՄԱՐՏԻ 30-Ի N412-L ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ

Տեղեկանք

- ✓ ՀՀ կառավարության 2020թ. մարտի 30-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ութերորդ միջոցառումը հաստատելու մասին» N412-L որոշման մեջ (այսուհետ՝ N412-L Որոշում) լրացումներ և փոփոխություններ են կատարվել 2020թ. ապրիլի 30-ին (մայիսի 7-ին), որոնք ստորագրվել են 2020թ. մայիսի 1-ին (մայիսի 11-ին): Հաշվառման համարները՝ N646-L (N703-L):
- ✓ 2020թ. մարտի 30-ին ընդունված N412-L Որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ են կատարվել 6 անգամ:
- ✓ 2020թ. ապրիլի 30-ին ընդունված N646-L որոշմամբ՝
 - լրացումներ են կատարվել N412-L Որոշման հավելվածի 1-ին, 6-րդ կետերում, 7-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում, 10-րդ և 11-րդ կետերում,
 - փոփոխություններ են կատարվել N412-L Որոշման հավելվածի 2-րդ կետի 9-րդ ենթակետում,
 - N412-L Որոշման հավելվածի 2-րդ կետը լրացվել է նոր՝ 10-22-րդ ենթակետերով:
- ✓ 2020թ. մայիսի 7-ին ընդունված N703-L որոշմամբ՝
 - N412-L Որոշման հավելվածի 2-րդ կետը լրացվել է նոր 23-րդ ենթակետով,
 - N412-L Որոշման հավելվածի 3-րդ կետը շարադրվել է նոր խմբագրությամբ:
- ✓ 2020թ. ապրիլի 30-ին ընդունված N646-L որոշումն ուժի մեջ է մտել 2020թ. մայիսի 6-ից, իսկ մայիսի 7-ին ընդունված N703-L որոշումը՝ 2020թ. մայիսի 13-ին:
- ✓ Փոփոխությունների և լրացումների հիման վրա կազմված ինկորպորացված տարբերակում փոփոխությունները ներկայացվում են հին տարբերակի վրա գիծ քաշելու ձևով, լրացումները՝ գունավորված:

Այսպես՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մարտի 2020 թվականի N 412-L

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՋՈՔԱՑՄԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ութերորդ միջոցառումը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ մինչև 2020թ. ապրիլի 9-ը ներկայացնել սույն որոշմամբ սահմանված միանվագ դրամական աջակցության տրամադրման կարգ:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ն. Փաշինյան

**2020 թ. մարտի 30
Երևան**

¹ Մինչև ՀՀ կառավարության 30.04.2020 թ. N 646-L որոշումն ուժի մեջ մտնելն աջակցություն ստացած վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի համար հաշվարկված աջակցության չափը, սույն որոշմամբ սահմանված փոփոխությունները հաշվի առնելով, ենթակա է վերահաշվարկման և դրա արդյունքում գոյացած լրացուցիչ գումարները վճարման՝ ՀՀ կառավարության 2020թ. ապրիլի 9-ի N507-L որոշմամբ սահմանված կարգով:



ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. Միջոցառման նպատակն է օժանդակել կորոնավիրուսի տարածման հետևանքով մասնավոր հատվածի տուժած ոլորտների (այսուհետ՝ Տուժած ոլորտ) վարձու աշխատողներին **« քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողներին »** և անհատ ձեռնարկատերերին (այսուհետ՝ Շահառու):

(1-ին կետը լրաց. 30.04.20 N 646-Լ)

2. Սույն որոշման իմաստով տուժած ոլորտներ են համարվում հետևյալ գործունեության տեսակները՝
 - 1) հյուրանոցային և հյուրատնային ծառայություններ.
 - 2) հանրային սննդի ծառայություններ.
 - 3) զբոսաշրջային ծառայություններ.
 - 4) վարսավիրանոցների և գեղեցկության սրահների ծառայություններ.
 - 5) մանրածախ առևտրի ծառայություններ, այդ թվում՝ առևտրի կենտրոնում կամ առևտրի իրականացման վայրում առք ու վաճառքի գործունեություն.
 - 6) ցամաքային տրանսպորտի գործունեություն (երթուղային տրանսպորտ).
 - 7) նախադպրոցական կրթություն (մասնավոր մանկապարտեզներ).
 - 8) սպորտի բնագավառում գործունեություն (սպորտային ակումբներ, լողավազաններ).
 - 9) զվարճությունների և հանգստի կազմակերպման այլ գործունեություն **(բացառությամբ համակարգչային խաղերի կազմակերպման և ինտերնետ ակումբների գործունեության):**

«10) հագուստի արտադրություն.

11) կոշիկի և այլ կաշվե արտադրատեսակների արտադրություն.

12) կահույքի արտադրություն.

13) թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղներից և քարերից զարդերի պատրաստում.

14) ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում.

15) օդային տրանսպորտի գործունեություն.

16) կինոթատրոնների գործունեություն.

17) լուսանկարչության բնագավառում գործունեություն.

18) ավտոմեքենաների և այլ առարկաների վարձույթ.

19) կրթական գործունեություն մշակույթի, երաժշտության, սպորտի, պարի բնագավառում.

20) ստեղծագործական, արվեստի և հանդիսադիր ներկայացումների կազմակերպման բնագավառում գործունեություն.

21) լվացման, մաքրման և չոր մաքրման ծառայությունների մատուցում.

22) պոլիգրաֆիական գործունեություն (տպագրության ծառայություն):»:

«23) առողջության վերականգնման կարիք ունեցող անձանց սոցիալական սպասարկում կացության ապահովմամբ»:

(2-րդ կետը լրաց. 16.04.20 N558-Լ, փոփ., լրաց. 30.04.20 N646-Լ, լրաց. 07.05.20 N703-Լ)

«3. Սույն միջոցառման իմաստով Տուժած ոլորտ չեն համարվում այն մանրածախ առևտրի ծառայությունները, որոնց շրջանակում վաճառվում է սննդամթերք, ծխախոտ, դեղորայք կամ ալկոհոլային խմիչք՝ հիմք ընդունելով մինչև 2020թ. մարտի 31-ն ընկած վերջին հաշվետու ժամանակաշրջանի համար մայիսի 5-ի դրությամբ հարկ վճարողների կողմից ներկայացված վերջին հարկային հաշվարկներում արտացոլված ՀՀ-ում կիրառվող՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի կողմ և գործունեության տեսակների տեսակարար կշիռը: Տուժած ոլորտ չեն համարվում նաև ոչ մասնագիտացված խանութներում այլ մանրածախ առևտրի գործունեություն իրականացնողները, եթե նրանց կողմից 2020թ. առաջին եռամսյակում հսկիչ դրամարկային մեքենաներով արտացոլված՝ սննդամթերքի, ծխախոտի, դեղորայքի և ալկոհոլային

**խմիչքի շրջանառությունը գերազանցում է նույն ժամանակահատվածի համար հսկիչ դրամարկ-
դային մեքենաներով արտացոլված շրջանառության 20 տոկոսը»:**

3. Սույն միջոցառման իմաստով Տուժած ուղորտ չեն համարվում այն մանրածախ առևտրի ծառայությունները, որոնց շրջանակում վաճառվում է (անկախ չափից և համամասնությունից) նաև սննդամթերք, ծխախոտ, դեղորայք կամ ալկոհոլային խմիչք՝ հիմք ընդունելով մինչև 2020թ. ապրիլի 1-ը ընկած վերջին հաշվետու ժամանակաշրջանի համար ապրիլի 1-ի դրությամբ հարկ վճարողների կողմից ներկայացված վերջին հարկային հաշվարկներում արտացոլված Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի կոդը և գործունեության տեսակների տեսակարար կշիռը:

(3-րդ կետը լրաց. 14.04.20 N 555-Լ, լրաց 07.05.20 N703-Լ)

4. Մեկից ավելի ուղորտներում (որոնցից մեկը կամ մի քանիսը ներառված են Տուժած ուղորտներում, իսկ մնացածը՝ ոչ) գործունեությունն ծավալող գործատու տնտեսավարող սուբյեկտների (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) (այսուհետ՝ Գործատու) աշխատակիցների աջակցության չափի որոշման կարգն ու պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության առանձին որոշմամբ:

5. Մեկից ավելի ուղորտներում (որոնցից մեկը կամ մի քանիսը ներառված են Տուժած ուղորտներում, իսկ մնացածը՝ ոչ) գործունեությունն ծավալող՝ Շահառու հանդիսացող անհատ ձեռնարկատերերի աջակցության չափի որոշման կարգն ու պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության առանձին որոշմամբ:

6. Վարձու աշխատողները Շահառու են հանդիսանում այն պարագայում, եթե 2020թ. մարտի 13-ից մարտի 30-ն ընկած ժամանակահատվածում հանդիսացել են Տուժած ուղորտների վարձու աշխատողներ (2020թ. մարտի 13-ին կամ դրանից առաջ աշխատանքի են ընդունվել Տուժած ուղորտի գործատուի մոտ և մինչև 2020թ. մարտի 30-ը ներառյալ անընդմեջ աշխատել են նույն գործատուի մոտ): **«Քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողները Շահառու են այն պարագայում, եթե 2020թ. մարտ ամսվա որևէ պահի դրությամբ հանդիսացել են Տուժած ուղորտների քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողներ»:** (6-րդ կետը լրաց. 21.04.20 N 584-Լ, 30.04.20 N 646-Լ)

7. Աջակցությունը տրամադրվում է միանվագ հետևյալ չափերով՝

1) եթե վարձու աշխատողի **«(քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողի)»** 2020թ. հունվար և փետրվար ամիսների համար հաշվարկված միջին ամսական աշխատավարձը գերազանցում է նվազագույն աշխատավարձի չափը, ապա վարձու աշխատողի **«(քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողի)»** համար 2020թ. հունվար և փետրվար ամիսների համար հաշվարկված միջին ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան նվազագույն աշխատավարձի չափը և ոչ ավել, քան նվազագույն աշխատավարձի կրկնապատիկը.

2) եթե վարձու աշխատողի **«(քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողի)»** 2020 թվականի հունվար և փետրվար ամիսների համար հաշվարկված միջին ամսական աշխատավարձը պակաս է նվազագույն աշխատավարձի չափից, ապա վարձու աշխատողի **«(քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողի)»** համար 2020 թվականի հունվար և փետրվար ամիսների համար հաշվարկված միջին ամսական աշխատավարձի չափով.

3) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ 2019թ. 4-րդ եռամսյակի իրացման շրջանառության 10 տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան նվազագույն աշխատավարձի կրկնապատիկի չափով:

(7-րդ կետը լրաց. 30.04.20 N 646-Լ)

8. Աջակցությունը տրամադրվում է Շահառուի կողմից www.online.ssa.am կայքէջին սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա:

9. Սույն միջոցառման շրջանակներում աջակցություն ստացած անձանց տվյալները հրապարակվում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքէջում:

10. Համատեղությամբ աշխատող վարձու աշխատողի **«(քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողի)»** դեպքում աջակցությունը տրվում է մեկ անգամ՝ աջակցության չափը որոշելու համար հիմք ընդունելով Տուժած ուղորտներում գործող բոլոր գործատուներից 2020թ. հունվար և փետրվար ամիսներին ստացած եկամուտների հանրագումարը՝ հիմք ընդունելով սույն կարգի 7-րդ կետում նշված դրույթները:

(10-րդ կետը լրաց. 30.04.20 N 646-Լ)



11. Միաժամանակ վարձու աշխատող **«(քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատող)»** և անհատ ձեռնարկատեր հանդիսացող Շահառուի դեպքում աջակցությունը տրամադրվում է առանձին որպես վարձու աշխատող **«(քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատող)»** և առանձին որպես անհատ ձեռնարկատեր հաշվարկված աջակցության չափերից առավելագույնի հաշվարկով՝ հիմք ընդունելով սույն կարգի 7-րդ կետում նշված դրույթները:

(10-րդ կետը լրաց. 30.04.20 N 646-Լ)

12. (կետն ուժը կորցրել է 14.04.20 N 555-Լ)

(հավելվածը լրաց. 09.04.20 N 500-Լ, լրաց., փոփ. 14.04.20 N 555-Լ, լրաց. 16.04.20 N 558-Լ, 21.04.20 N 584-Լ, փոփ., լրաց. 30.04.20 N 646-Լ, լրաց., խմբ. 07.05.20 N 703-Լ)

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար

Է. Աղաջանյան

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020Թ. ԱՊՐԻԼԻ 9-Ի N507-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ

Տեղեկանք

- ✓ ՀՀ կառավարության 2020թ. ապրիլի 9-ի «Կորոնավիրուսի հետևանքով մասնավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին և անհատ ձեռնարկատերերին միանվագ աջակցություն տրամադրելու կարգը հաստատելու մասին» N507-Լ որոշման մեջ (այսուհետ՝ N507-Լ որոշում) լրացումներ և փոփոխություններ են կատարվել 2020թ. ապրիլի 30-ին (մայիսի 7-ին), որոնք ստորագրվել են 2020թ. մայիսի 1-ին (մայիսի 11-ին): Հաշվառման համարները՝ N646-Լ (N703-Լ):
- ✓ 2020թ. ապրիլի 9-ին ընդունված N507-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ են կատարվել 2 անգամ:
- ✓ 2020թ. ապրիլի 30-ին ընդունված N646-Լ որոշմամբ՝
 - լրացումներ են կատարվել N507-Լ որոշման վերնագրում, տեքստում, հավելվածի վերնագրում, հավելվածի 5-րդ կետում.
 - փոփոխություններ են կատարվել N507-Լ որոշման հավելվածի 1-ին և 3-րդ կետերում:
- ✓ 2020թ. մայիսի 7-ին ընդունված N703-Լ որոշմամբ փոփոխություններ են կատարվել N 507-Լ որոշման հավելվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետում:
- ✓ 2020թ. ապրիլի 30-ին ընդունված N646-Լ որոշումն ուժի մեջ է մտել 2020թ. մայիսի 6-ից, իսկ մայիսի 7-ին ընդունված N703-Լ որոշումը՝ 2020թ. մայիսի 13-ին:
- ✓ Փոփոխությունների և լրացումների հիման վրա կազմված ինկորպորացված տարբերակում փոփոխությունները ներկայացվում են հիմ տարբերակի վրա գիծ քաշելու ձևով, լրացումները՝ գունավորված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 ապրիլի 2020 թվականի N 507-Լ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ՏՈՒԺԱԾ ՈԼՈՐՏՆԵՐԻ

ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ «(ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ)» ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը լրաց. 30.04.20 N 646-Լ)

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը և ՀՀ կառավարության 2020թ. մարտի 30-ի N 412-Լ որոշումը՝ ՀՀ կառավարությունը որոշում է.

1. Հաստատել կորոնավիրուսի հետևանքով մասնավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին **«(քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողներին)»** և անհատ ձեռնարկատերերին միանվագ աջակցություն տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

(1-ին կետը լրաց. 30.04.20 N 646-Լ)

2. Պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությանը տրամադրել սույն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

**2020 թ. ապրիլի 9
Երևան**

Ն. Փաշինյան

**Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
ապրիլի 9-ի N 507-Լ որոշման**

Կ Ա Ր Գ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ՏՈՒԺԱԾ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ «(ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ)»

ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

(վերնագիրը լրաց. 30.04.20 N 646-Լ)

1. Սույն կարգով կարգավորվում են ՀՀ կառավարության 2020թ. մարտի 30-ի N412-Լ որոշմամբ նախատեսված միանվագ աջակցություն նշանակելուն և վճարելուն առնչվող հարաբերությունները: ~~Քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա աշխատանք կատարող կամ ծառայություն մատուցող անձը սույն կարգի իմաստով չի համարվում վարձու աշխատող և չի հանդիսանում ՀՀ կառավարության 30.03.2020թ. N412-Լ որոշմամբ սահմանված միջոցառման շահառու, իսկ այդ պայմանագրի հիման վրա ստացած եկամուտը՝ աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումներում չի հաշվառվում:~~ **(նախադասությունը հանվել է 30.04.20 N 646-Լ)**

(1-ին կետը փոփ. 30.04.20 N 646-Լ)

2. Միանվագ աջակցությունը նշանակում և վճարում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 20-ի N1676-Ն որոշմամբ հարկային մարմնից ստացված տվյալները 2020թ. ապրիլի 1-ի դրությամբ:

3. Պետական եկամուտների կոմիտեն, հաշվի առնելով ՀՀ կառավարության 2020թ. մարտի 30-ի N412-Լ որոշմամբ հաստատված միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) 2-րդ և 3-րդ կետերը, էլեկտրոնային եղանակով Ծառայությանն է տրամադրում՝

1) բացառապես Տուժած ոլորտների գործատուների ՀՎՀՀ-ները.

2) մեկից ավելի ոլորտներում (որոնցից մեկը կամ մի քանիսը ներառված են Տուժած ոլորտներում, իսկ մնացածը՝ ոչ, և Տուժած ոլորտներում գործունեության տեսակարար կշիռը կազմում է գործատուի ընդհանուր գործունեության առնվազն 40 տոկոսը) գործունեություն ծավալող գործատուների ՀՎՀՀ-ները.

3) բացառապես Տուժած ոլորտների անհատ ձեռնարկատերերի ՀՎՀՀ-ները և հանրային ծառայությունների համարանիշները, 2019թ. 4-րդ եռամսյակի իրացման շրջանառությունը.

4) մեկից ավելի ոլորտներում (որոնցից մեկը կամ մի քանիսը ներառված են Տուժած ոլորտներում, իսկ մնացածը՝ ոչ, և Տուժած ոլորտներում գործունեության տեսակարար կշիռը կազմում է անհատ ձեռնարկատիրոջ ընդհանուր գործունեության առնվազն 40 տոկոսը) գործունեություն ծավալող անհատ ձեռնարկատերերի ՀՎՀՀ-ները, հանրային ծառայությունների համարանիշները և Տուժած ոլորտների 2019թ. 4-րդ եռամսյակի իրացման շրջանառությունը:

Սույն կետում նշված՝ Տուժած ուղորտների գործատուների և անհատ ձեռնարկատերերի ՀՎՀԳ-ների վերաբերյալ տեղեկատվությունը Պետական եկամուտների կոմիտեն Ծառայությանը տրամադրում է՝ հիմք ընդունելով մինչև 2020թ. ապրիլի 1-ը **«մարտի 31-ը»** ընկած վերջին հաշվետու ժամանակաշրջանի համար-**ապրիլի 1-ի «մայիսի 5-ի»** դրությամբ հարկ վճարողների կողմից ներկայացված վերջին հարկային հաշվարկներում արտացոլված ՀՀ-ում կիրառվող՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի կողմ և գործունեության տեսակների տեսակարար կշիռը:

Սույն կետում նշված՝ անհատ ձեռնարկատերերի 2019թ. 4-րդ եռամսյակի իրացման շրջանառության վերաբերյալ տեղեկատվությունը Պետական եկամուտների կոմիտեն Ծառայությանը տրամադրում է՝ հիմք ընդունելով 2020թ. ապրիլի 1-ի դրությամբ ներկայացված համապատասխան հարկային հաշվարկներում արտացոլված տվյալները՝ սույն կարգի 3.1-ին կետին համապատասխան:

(3-րդ կետը փոփ. 30.04.20 N 646-Լ, լրաց., խմբ. 07.05.20 N 703-Լ)

3.1. Ավելացված արժեքի հարկ վճարող կամ շրջանառության հարկ վճարող համարվող անհատ ձեռնարկատերերի 2019թ. 4-րդ եռամսյակի իրացման շրջանառությունը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով վերջիններիս կողմից ներկայացված համապատասխանաբար 2019թ. հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ավելացված արժեքի հարկի և 2019թ. 4-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկները:

Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անհատ ձեռնարկատերերի 2019թ. 4-րդ եռամսյակի իրացման շրջանառությունը հաշվարկվում է վերջիններիս կողմից ներկայացված իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության մեջ արտացոլված ընդամենը իրացման շրջանառության Զ-ի չափով:

Սեկից ավելի ուղորտներում (որոնցից մեկը կամ մի քանիսը ներառված են Տուժած ուղորտներում, իսկ մնացածը՝ ոչ, և Տուժած ուղորտներում գործունեության տեսակարար կշիռը կազմում է անհատ ձեռնարկատիրոջ ընդհանուր գործունեության առնվազն 40 տոկոսը) գործունեություն ծավալող անհատ ձեռնարկատերերի Տուժած ուղորտների 2019թ. 4-րդ եռամսյակի իրացման շրջանառությունը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով Տուժած ուղորտներում գործունեության տեսակների տեսակարար կշիռը:

4. Ծառայությունը, հիմք ընդունելով Միջոցառման 6-րդ և 7-րդ կետերի դրույթները, ինչպես նաև Տուժած ուղորտների գործատուների վերաբերյալ Պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվությունը, ձևավորում է շահառուների ցանկ:

5. 2020թ. հունվար և փետրվար ամիսների համար միջին ամսական աշխատավարձի չափը հաշվարկվում է 2020թ. հունվար և փետրվար ամիսների համար շահառուին վճարված (վճարման ենթակա) աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների **«, քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացվող եկամուտների»** (այսուհետ՝ եկամուտ) հանրագումարը երկուսի բաժանելու միջոցով: Սույն կետում նշված՝ եկամտի չափում չեն ներառվում աշխատավարձից **«,քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացվող եկամուտներից»** վճարվող հարկերը և այլ պարտադիր վճարները:

(5-րդ կետը լրաց. 30.04.20 N 646-Լ)

6. Շահառուների ցանկում ներառվում են նաև Տուժած ուղորտների գործատուների՝ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող վարձու աշխատողները **«(քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողները)»**:

(6-րդ կետը լրաց. 30.04.20 N 646-Լ)

7. Եթե շահառուների ցանկում ներառված վարձու աշխատողների **«(քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողների)»** համար 2020թ. հունվար և փետրվար ամիսներին եկամուտ չի հաշվարկվել կամ անհատ ձեռնարկատերը 2019թ. 4-րդ եռամսյակում իրացման շրջանառություն չի ունեցել, ապա աջակցության գումար չի վճարվում:

(7-րդ կետը լրաց. 30.04.20 N 646-Լ)

8. Համատեղությամբ աշխատող շահառուի միջին ամսական աշխատավարձի չափը հաշվարկելու հա-

մար հիմք են ընդունվում միայն Տուժած ոլորտի գործատուի կողմից (իսկ եթե շահառուն աշխատում է Տուժած ոլորտի մեկից ավելի գործատուների մոտ՝ բոլոր այդ գործատուների կողմից) վարձու աշխատողի **«(քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողի)»** համար հաշվարկված եկամուտը:

(8-րդ կետը լրաց. 30.04.20 N 646-Լ)

9. Մեկից ավելի ոլորտներում (որոնցից մեկը կամ մի քանիսը ներառված են Տուժած ոլորտներում, իսկ մնացածը՝ ոչ) գործունեություն ծավալող՝ շահառու հանդիսացող անհատ ձեռնարկատերերի աջակցության չափի որոշման համար հիմք է հանդիսանում Տուժած ոլորտներում իրացման շրջանառությունը:

10. Եթե գործատուն գործունեություն է իրականացնում մեկից ավելի ոլորտներում (որոնցից մեկը կամ մի քանիսը ներառված են Տուժած ոլորտներում, իսկ մնացածը՝ ոչ), ապա գործատուի վարձու աշխատողների **«(քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողների)»** աջակցություն տրամադրվում է, եթե Տուժած ոլորտներում գործունեության տեսակարար կշիռը տվյալ տնտեսավարող սուբյեկտի ընդհանուր գործունեությունում կազմում է առնվազն 40 տոկոս: Ընդ որում, այս դեպքում շահառու են հանդիսանում գործատուի բոլոր վարձու աշխատողները **«(քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողները)»**:

(10-րդ կետը լրաց. 30.04.20 N 646-Լ)

11. Եթե անհատ ձեռնարկատերը գործունեություն է իրականացնում մեկից ավելի ոլորտներում (որոնցից մեկը կամ մի քանիսը ներառված են Տուժած ոլորտներում, իսկ մնացածը՝ ոչ), ապա նրան աջակցություն տրամադրվում է 2019թ. 4-րդ եռամսյակի իրացման շրջանառության մեջ Տուժած ոլորտներում գործունեության (իրացման շրջանառության) տեսակարար կշիռը կազմում է առնվազն 40 տոկոս:

12. Շահառուների ցանկում ներառվում են՝

1) շահառուի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը, գործատուի ՀՎՀՀ-ն:

2) 2020թ. հունվար և փետրվար ամիսներին վարձու աշխատողին **«(քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողին)»** վճարված (վճարման ենթակա) եկամուտը, միջին ամսական աշխատավարձի չափը:

3) անհատ ձեռնարկատեր շահառուի 2019թ. 4-րդ եռամսյակի իրացման շրջանառությունը:

4) հաշվարկված աջակցության չափը:

(12-րդ կետը լրաց. 30.04.20 N 646-Լ)

13. Միաժամանակ վարձու աշխատող **«(քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատող)»** և անհատ ձեռնարկատեր հանդիսացող Շահառուի դեպքում աջակցությունը տրամադրվում է առանձին, որպես վարձու աշխատող **«(քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատող)»**, և առանձին, որպես անհատ ձեռնարկատեր, հաշվարկված աջակցության չափերից առավելագույնի հաշվարկով՝ հիմք ընդունելով սույն կարգի 8-րդ և 9-րդ կետերի դրույթները:

(13-րդ կետը լրաց. 30.04.20 N 646-Լ)

14. Դիմումը ներկայացնելու համար անձը online.ssa.am կայքէջից մուտք է գործում համապատասխան ծրագրային միջավայր և Ծառայություն է ներկայացնում՝

1) շահառուի անունը, ազգանունը, հայրանունը, հանրային ծառայությունների համարանիշը:

2) շահառուի հետ հետադարձ կապի բջջային հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն:

3) շահառուի քարտային հաշվին կցված վճարային քարտի 16-նիշանոց համարը (եթե շահառուն ցանկանում է գումարն ստանալ քարտային հաշվին փոխանցելու միջոցով), կամ բանկի անվանումը, որի միջոցով շահառուն ցանկանում է ստանալ աջակցության գումարը (եթե շահառուն չի ներկայացնում քարտային հաշվին կցված վճարային քարտի 16-նիշանոց համարը):

(14-րդ կետը խմբ. 14.04.20 N 555-Լ)

15. Ծառայությունը, առցանց ռեժիմում ճշտում է ներկայացված տվյալների հավաստիությունը (համապատասխանությունը բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալներին) և շահառուի տվյալների առկայությունը Շահառուների ցանկում:



16. Շահառուի տվյալները բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալներին համապատասխանելու դեպքում Ծառայությունը հաշվառում կամ մերժում է էլեկտրոնային դիմումը՝ շահառուին տեղեկացնելով՝

1) հետադարձ կապի բջջային հեռախոսահամարին և էլեկտրոնային փոստի հասցեին էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկելու միջոցով՝ դիմումը հաշվառելու և շահառուին վճարման ցուցակներում ներառելու մասին, եթե շահառուն ընդգրկված է շահառուների ցանկում, կամ.

2) էլեկտրոնային փոստի հասցեին էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկելու միջոցով՝ դիմումը մերժելու մասին, եթե շահառուն ընդգրկված չէ շահառուների ցանկում

17. Ծառայությունը օրական պարբերականությամբ, սույն կարգի 16-րդ կետի 1-ին ենթակետում նշված դիմումների վերաբերյալ տեղեկատվությունը համադրում է շահառուների ցանկի հետ և ձևավորում է վճարման ցուցակ:

18. Վճարման ցուցակում ներառված շահառուների տվյալները հանվում են շահառուների ցանկից:

19. Վճարման ցուցակում ներառվում են բանկի անվանումը, ինչպես նաև շահառուի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը և վճարման ենթակա գումարը:

20. Աջակցության գումարը վճարվում է անկանխիկ եղանակով՝

1) շահառուի քարտային հաշվին փոխանցելու միջոցով, եթե շահառուն ներկայացրել է իր վճարային քարտի 16-նիշանոց համարը, կամ

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. մարտի 6-ի N275-Ն որոշման N3 հավելվածի 2-րդ կետի 1.1-ին ենթակետով երեխայի ծննդյան միանվագ նպաստը վճարելու համար սահմանված կարգով՝ այդ հավելվածի 18-րդ կետում նշված համաձայնագիր կնքած բանկերի միջոցով՝ եթե շահառուն չի ներկայացրել իր վճարային քարտի 16-նիշանոց համարը կամ ներկայացված 16-նիշանոց համարը սխալ է կամ որևէ այլ պատճառով հնարավոր չէ գումարը փոխանցել շահառուի քարտային հաշվին: Ընդ որում, սույն ենթակետում նշված դեպքում, բանկը միանվագ աջակցության գումարը վճարում է բանկին գումարն ստանալու պահանջ ներկայացրած՝ դիմող ծնողին կամ նրա տված՝ նոտարական կարգով վավերացված լիազորագիրը ներկայացրած անձին, անձը հաստատող փաստաթղթի հիման վրա, իսկ եթե միանվագ աջակցության գումարը բանկին փոխանցելու ամսվան հաջորդող 3 ամսվա ընթացքում բանկին չի ներկայացվում գումարն ստանալու պահանջ, ապա գումարը վերադարձվում է ՀՀ պետական բյուջե:

(20-րդ կետը խմբ. 14.04.20 N 555-Լ)

21. Վճարման ցուցակը բանկին փոխանցելու օրվան հաջորդող օրը Ծառայությունն այդ մասին հետադարձ կապի բջջային հեռախոսահամարին և էլեկտրոնային փոստի հասցեին էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկելու միջոցով տեղեկացնում է շահառուներին:

22. Աջակցության գումարը չի կարող արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել կամ հաշվանցվել հաճախորդի պարտավորությունների դիմաց:

23. Աջակցության գումարը ընտանիքի անապահովությունը գնահատելիս ընտանիքի ամբողջական եկամտի հաշվարկի մեջ չի մտնում:

24. Ծառայության պաշտոնական կայքէջում հրապարակվում է սույն կարգով սահմանված աջակցություն ստացած աշխատողների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը՝

1) աշխատողի անունը, ազգանունը, հայրանունը.

2) գործատուի ՀՎՀՀ-ն, անվանումը.

3) անփոփ տեղեկատվություն Տուժած ոլորտների գործատուների թվաքանակի, աջակցություն ստացած աշխատողների և նրանց վճարված գումարների և վերաբերյալ:

(հավելվածը խմբ. 14.04.20 N 555-Լ, լրաց., փոփ. 30.04.20 N 646-Լ, փոփ. 07.05.20 N 703-Լ)

**Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի ղեկավար**

Է. Աղաջանյան

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020Թ. ՄԱՐՏԻ 26-Ի N357-L ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ

Տեղեկանք

- ✓ ՀՀ կառավարության 2020թ. մարտի 26-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երրորդ միջոցառումը հաստատելու մասին» N357-L որոշման մեջ (այսուհետ՝ N357-L Որոշում) փոփոխություններ և լրացում է կատարվել 2020թ. ապրիլի 30-ին (մայիսի 13-ին), որոնք ստորագրվել են 2020թ. մայիսի 1-ին (մայիսի 13-ին): Հաշվառման համարը՝ N646-L (N728-L) :
- ✓ 2020թ. մարտի 26-ին ընդունված N357-L Որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ են կատարվել 7 անգամ:
- ✓ 2020թ. ապրիլի 30-ին ընդունված N646-L որոշմամբ՝
 - փոփոխություն է կատարվել N357-L Որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության մեջ:
- ✓ 2020թ. ապրիլի 30-ին ընդունված N 646-L որոշումն ուժի մեջ է մտել 2020թ. մայիսի 6-ից:
- ✓ 2020թ. մայիսի 13-ին ընդունված N728-L որոշմամբ՝
 - լրացում է կատարվել N357-L Որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում.
 - փոփոխություն է կատարվել N357-L Որոշման հավելվածի 5-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերում:
- ✓ 2020թ. մայիսի 13-ին ընդունված N728-L որոշումն ուժի մեջ է մտել 2020թ. մայիսի 14-ից:
- ✓ Փոփոխությունների և լրացման հիման վրա կազմված ինկորպորացված տարբերակում փոփոխությունները ներկայացվում են հին տարբերակի վրա գիծ քաշելու ձևով, լրացումը՝ գունավորված:

Այսպես.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մարտի 2020 թվականի N 357-L

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՋՈՔԱՑՄԱՆ

ԵՐՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երրորդ միջոցառումը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարարին և առաջարկել ՀՀ կենտրոնական բանկի նախագահին՝ մինչև 2020թ. մարտի 31-ը ներկայացնել սույն որոշման հավելվածի 8-րդ կետով սահմանված օժանդակության գործիքների կիրառման կարգը:

3. Հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարարին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահին և առաջարկել ՀՀ կենտրոնական բանկի նախագահին՝ մինչև 2020թ. մարտի 31-ը ներկայացնել սույն որոշման հավելվածի 9-րդ կետով սահմանված շահառուների ընտրության ընթացակարգը:

4. ՀՀ էկոնոմիկայի նախարարին՝ մինչև 2020թ. մարտի 31-ը ներկայացնել սույն որոշման հավելվածի 9-րդ կետով սահմանված վարկերի մարման ընթացակարգը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ
2020 թ. մարտի 26
Երևան

Ն. Փաշինյան



Ե Ր Ր Ո Ր Դ Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ ՈՒ Մ
ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ

...

2. ՏՆՏԵՍԱԿԱՐՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

3. Սույն միջոցառման իմաստով տնտեսավարող է համարվում ՀՀ տարածքում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող այն առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը, որն ապահովում է ստորև թվարկված բոլոր չափանիշներին համապատասխանությունը՝

1) հիմնական գործունեություն **«(համաձայն Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանի)»** է ծավալում ստորև թվարկված ոլորտներից որևէ մեկում՝

- ա. մշակող արդյունաբերություն,
- բ. կառուցարարական և հանրային սննդի կազմակերպում,
- գ. փոխադրումներ և պահեստային տնտեսություն,
- դ. զբոսաշրջային ծառայություններ,
- ե. սպասարկման այլ ծառայություններ,
- զ. առողջապահություն,
- է. նախադպրոցական կրթություն (մասնավոր մանկապարտեզներ),
- ը. սպորտի բնագավառում գործունեություն (սպորտային ակումբներ, լողավազաններ),
- թ. զվարճությունների և հանգստի կազմակերպման այլ գործունեություն **(բացառությամբ համակարգչային խաղերի կազմակերպման և ինտերնետ ակումբների գործունեության)**,

ժ. շենքերի շինարարություն, քաղաքացիական շինարարություն, մասնագիտացված շինարարական գործունեություն.

2) ՀՀ տարածքում առևտրային գործունեություն է իրականացրել առնվազն դիմումի ներկայացմանը նախորդող մեկ տարվա ընթացքում.

3) 2019թ. շրջանառությունը կազմել է առնվազն 24 մլն դրամ, սակայն չի գերազանցել 500 մլն դրամը.

4) 2019թ. յուրաքանչյուր եռամսյակի շրջանառությունը չի գերազանցել տվյալ տարվա շրջանառության գումարի 70 տոկոսը.

5) ունի բարվոք վարկային պատմություն, այսինքն՝ ըստ ԱԶՐԱ տեղեկատվության՝ վարկի համար դիմելու ամսաթվին նախորդող 12 ամիսների ընթացքում չի ունեցել գումարային 30 օր և ավելի ժամկետով ժամկետանց վարկային պարտավորություններ.

6) ունեցել է բարվոք հարկային պատմություն, այսինքն՝

ա. դիմումի ներկայացման օրվան նախորդող 365 օրերի ընթացքում չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ վարչական վարույթ հարուցված չէ, կամ

բ. դիմումը ներկայացնելու օրը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա ժամկետանց հարկային պարտավորությունները չեն գերազանցել 2019թ. ընթացքում միասնական գանձապետական հաշվից մարված հարկային պարտավորությունների, 2019թ. ընթացքում վճարված պետական տուրքի գումարների և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ միասնական գանձապետական հաշվի մնացորդի հանրագումարի 1 տոկոսը:

(3-րդ կետը փոփ. 03.04.20 N 464-Լ, խմբ. 14.04.20 N 554-Լ, լրաց. 16.04.20 N 559-Լ, փոփ. 29.04.20 N 640-Լ, լրաց. 13.05.20 N 728-Լ)

3.1. Ընդ որում, սույն որոշմամբ հաստատված միջոցառումից չեն կարող օգտվել այն տնտեսավարողները, ովքեր օգտվել են ՀՀ կառավարության 2020թ. մարտի 26-ի N355-Լ որոշմամբ սահմանված միջոցառումից:

(3.1-ին կետը լրաց. 09.04.20 N 503-Լ)

...

5. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆԵՐՔՈՒ ՍՏԱՑՎԵԼԻՔ ՎԱՐԿԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ

5. Օժանդակությամբ ստացվող վարկերի միջոցները կարող են տնտեսավարողների կողմից օգտագործվել միայն հետևյալ ծախսերից մեկի կամ մի քանիսի իրականացման նպատակով՝

1) աշխատակիցներին աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ (ընդ որում, վճարում է համարվում նաև 2020 թվականի մարտի 1-ից հետո նույն նպատակով և փաստացի չափով իրականացված ծախսերը), բայց յուրաքանչյուր աշխատակցի դեպքում ոչ ավելի, քան ամսական 300 հազ. դրամ գումարի չափով՝ առավելագույնը **երեք «6»** ամսվա համար:

2) պետական կամ համայնքի բյուջե հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների վճարումներ (այսուհետ՝ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների վարկեր) (ընդ որում, վճարում է համարվում նաև 2020 թվականի մարտի 1-ից հետո նույն նպատակով և փաստացի չափով իրականացված ծախսերը)՝ առավելագույնը **երեք «6»** ամսվա համար՝ բացառությամբ կանխավճարների և գերավճարների:

3) **հույսերի գնում կամ ներմուծում (այդ թվում՝ մեկից ավելի պայմանագրերի գծով, որոնց ընդհանուր գումարը չի գերազանցում սույն որոշման 6-րդ կետով սահմանված վարկի առավելագույն գումարը)՝ պայմանով, որ պայմանագիրը կնքվել է 2020 թվականի փետրվարի 1-ից հետո կամ պայմանագիրը կնքվել է մինչև 2020 թվականի փետրվարի 1-ը, սակայն հաշվարկային փաստաթղթերը տրվել (թողարկվել) են 2020 թվականի փետրվարի 1-ից հետո, և հույսի ամբողջ ծավալը պետք է օգտագործվի Հայաստանի Հանրապետությունում՝ նույն տնտեսավարողի արտադրական նպատակներով: Օգտագործման նպատակայնության նկատմամբ հսկողությունն իրականացնում է ներդրումների աջակցման կենտրոնը:**

«3) հույսի (բացառությամբ վառելանյութի) գնում կամ ներմուծում՝ պայմանով, որ պայմանագիրը կնքվել է մինչև 2020 թվականի փետրվարի 1-ը, կամ պայմանագիրը կնքվել է մինչև 2020 թվականի փետրվարի 1-ը և հաշվարկային փաստաթղթերը տրվել (թողարկվել) են 2020 թվականի փետրվարի 1-ից հետո, կամ հաշվարկային փաստաթղթերը տրվել են փետրվարի 1-ից հետո և հույսի ամբողջ ծավալը պետք է օգտագործվի Հայաստանի Հանրապետությունում՝ տվյալ տնտեսավարողի արտադրական, ծառայությունը մատուցելու և սպասարկումը կազմակերպելու նպատակներով: Օգտագործման նպատակայնության նկատմամբ հսկողությունն իրականացնում է ներդրումների աջակցման կենտրոնը (համաձայն Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հրամանի)»:

4) հանրային ծառայությունների վճարումներ (էլեկտրաէներգիայի, ջրի, գազի, կապի և հեռահաղորդակցության գծով ծախսերից մեկի կամ մի քանիսի իրականացում) (ընդ որում, ծախսերի իրականացում է համարվում նաև 2020 թվականի մարտի 1-ից հետո նույն նպատակով և փաստացի չափով իրականացված ծախսերը)՝ առավելագույնը **երեք «6»** ամսվա համար՝ բացառությամբ կանխավճարների և գերավճարների:

5) **վարձակալական վճարներ:**

«5) տնտեսավարողի կողմից արտադրական կամ ծառայությունների մատուցման նպատակով առաջարժ գույքի և հողամասի վարձակալական վճարներ, եթե տնտեսավարողն ունի փետրվար 1-ի դրությամբ գործող պայմանագիր: Ընդ որում, ծախսերի իրականացում է համարվում 2020 թվականի մարտի 1-ից հետո նույն նպատակով և փաստացի չափով իրականացված ծախսերը՝ առավելագույնը 6 ամիս ժամկետով»:

(5-րդ կետը փոփ., լրաց., խմբ. 09.04.20 N 503-Լ, խմբ. 22.04.20 N 586-Լ, փոփ., խմբ. 13.05.20 N 728-Լ)

6. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆԵՐՔՈՒ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ

6. Օժանդակության գործիքների կիրառմամբ տրամադրվող վարկերը պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին:

- արժույթը՝ 77 դրամ;

- ժամկետը՝ 36 ամիս, առաջին 6 ամսում վարկի մարում չի նախատեսվում;

- մեկ տնտեսավարող սուբյեկտի վարկի առավելագույն չափը՝ 50 մլն ՀՀ դրամ բայց ոչ ավել, քան տնտեսավարող սուբյեկտի 2019թ. շրջանառության 10%-ը:

- վարկային միջոցների օգտագործման կարգը՝ միայն անկանխիկ և բանկային փոխանցումով՝ ծախսերի նպատակայնությունը հաստատելուց հետո, վարկի հաստատմանը հաջորդող երեք ամիսների ընթացքում:

Օժանդակության գործիքները կիրառվում են առանց դրանց համար վարկային միջոցների տրամադրման վճարների գանձման՝ բացառությամբ այն դեպքի, եթե տնտեսավարողը չի համապատասխանում սույն կարգի 3-րդ կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պահանջին: Այդ դեպքում վճարվում է վարկային միջոցների տրամադրման վճար՝ փաստացի հատկացվող միջոցների 1 տոկոսի չափով:

«6. Օժանդակության գործիքների կիրառմամբ տրամադրվող վարկերը պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

1) արժույթը՝ դրամ.

2) ժամկետը՝ 36 ամիս, առաջին 6 ամսում վարկի մարում չի նախատեսվում.

3) մեկ տնտեսավարող սուբյեկտի վարկի առավելագույն չափը՝ 50 մլն դրամ, բայց ոչ ավելի, քան տնտեսավարող սուբյեկտի 2019 թվականի շրջանառության 10%-ը:

4) վարկային միջոցների օգտագործման կարգը՝ միայն անկանխիկ և բանկային փոխանցումով՝ ծախսերի նպատակայնությունը հաստատելուց հետո, վարկի հաստատմանը հաջորդող 6 ամիսների ընթացքում.

5) օժանդակության գործիքները կիրառվում են առանց դրանց համար վարկային միջոցների տրամադրման վճարների գանձման՝ բացառությամբ այն դեպքի, եթե տնտեսավարողը չի համապատասխանում սույն կարգի 3-րդ կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պահանջին: Այդ դեպքում վճարվում է վարկային միջոցների տրամադրման վճար՝ փաստացի հատկացվող միջոցների 1 տոկոսի չափով:»:

(6-րդ կետը լրաց. 14.04.20 N 554-Լ, խմբ. 13.05.20 N 728-Լ)



Հ Ա Մ Ա Ր
ՆՈՒԱՆ ԳԻՆԻ



ՕՐԳԱՆԻԿ



AM-BIO-112
Armenian Agriculture



**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ**

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020Թ. ՄԱՐՏԻ 26-Ի N356-L ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ

Տեղեկանք

- ✓ ՀՀ կառավարության 2020թ. մարտի 26-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառումը հաստատելու մասին» N356-L որոշման մեջ (այսուհետ՝ N 356-L Որոշում) փոփոխություններ են կատարվել 2020թ. ապրիլի 30-ին, որը ստորագրվել է 2020թ. մայիսի 1-ին: Հաշվառման համարը՝ N644-L:
- ✓ 2020թ. մարտի 26-ին ընդունված N356-L Որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ են կատարվել 4 անգամ:
 - 2020թ. ապրիլի 30-ին ընդունված N644-L որոշմամբ փոփոխություններ են կատարվել N 356-L Որոշման հավելվածի 3-րդ կետում, հավելվածի NN 1 և 2 աղյուսակների 1-ին տողի 3-րդ սյունակում, N 4 աղյուսակում.
- ✓ 2020թ. ապրիլի 30-ին ընդունված N 644-L որոշումն ուժի մեջ է մտել 2020թ. մայիսի 6-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 մարտի 2020 թվականի N 356-L

**ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՁՈՔԱՅՄԱՆ
ԵՐԿՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը՝ ՀՀ կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառումը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ ֆինանսների նախարար Ատոմ Ջանջուղազյանին և Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանին՝ մինչև սույն թվականի մարտի 31-ը ներկայացնել սույն որոշման հավելվածի 11-րդ կետում նշված օժանդակության համաֆինանսավորման գործիքի կիրառման կարգը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ
2020 թ. մարտի 26
Երևան**



Ն. Փաշինյան

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020Թ. ՄԱՐՏԻ 31-Ի N 416-L ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ

Տեղեկանք

- ✓ ՀՀ կառավարության 2020թ. մարտի 31-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին, երկրորդ և երրորդ միջոցառումների շրջանակում տրամադրվող օժանդակության գործիքների կիրառման կարգերը հաստատելու մասին» N416-L որոշման մեջ (այսուհետ՝ N416-L Որոշում) փոփոխություն է կատարվել 2020թ. ապրիլի 30-ին, որը ստորագրվել է 2020թ. մայիսի 1-ին: Հաշվառման համարը՝ N 644-L:
- ✓ 2020թ. մարտի 26-ին ընդունված N356-L Որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ են կատարվել 7 անգամ:

- 2020թ. ապրիլի 30-ին ընդունված N 644-L որոշմամբ փոփոխություններ են կատարվել N 416-L Որոշման N 2 հավելվածի 2-րդ կետում:
- ✓ 2020թ. ապրիլի 30-ին ընդունված N 644-L որոշումն ուժի մեջ է մտել 2020թ. մայիսի 6-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մարտի 2020 թվականի N 416-L

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՁՈՔԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ, ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը, 146-րդ հոդվածի 4-րդ մասը, ՀՀ կառավարության 2020թ. մարտի 26-ի NN 355-L, 356-L, 357-L որոշումները, «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը՝ ՀՀ կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

1) ՀՀ կառավարության 2020թ. մարտի 26-ի N 355-L որոշմամբ հաստատված՝ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառման շրջանակում տրամադրվող օժանդակության գործիքների կիրառման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ՀՀ կառավարության 2020թ. մարտի 26-ի N356-L որոշմամբ հաստատված՝ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառման շրջանակում տրամադրվող օժանդակության գործիքների կիրառման կարգը՝ համաձայն N2 հավելվածի.

3) ՀՀ կառավարության 2020թ. մարտի 26-ի N357-L որոշմամբ հաստատված՝ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երրորդ միջոցառման շրջանակում տրամադրվող օժանդակության գործիքների կիրառման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) սույն որոշման N1 հավելվածով հաստատված կարգով սահմանված ՀՀ կառավարության լիազորած մարմինների և ՀՀ կենտրոնական բանկի միջև սույն որոշման շրջանակում կնքվում է ֆինանսական գործակալության պայմանագիր, որի համաձայն ՀՀ կենտրոնական բանկը հանդես է գալու որպես ՀՀ կառավարության ֆինանսական գործակալ.

2) սույն որոշման N1 հավելվածով հաստատված կարգով սահմանված միջոցառումների ֆինանսավորման համար ծախսերի կատարման հետ կապված հարցերով ՀՀ կառավարության լիազոր մարմին է համարվում ՀՀ ֆինանսների նախարարությունը, իսկ միջոցառումների իրականացման պատասխանատու մարմին է հանդիսանում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը.

3) սույն որոշման NN 2 և 3 հավելվածներով հաստատված կարգով սահմանված միջոցառումների համար ֆինանսական միջոցների հետ կապված հարցերով ՀՀ կառավարության լիազոր մարմին է ՀՀ ֆինանսների նախարարությունը, իսկ միջոցառման իրականացման պատասխանատու մարմին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը:

4) սույն որոշման N 2 հավելվածով հաստատված կարգով ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի միջև սույն որոշման շրջանակում կնքվում է ֆինանսական գործակալության պայմանագիր, որի համաձայն ՀՀ կենտրոնական բանկը հանդես է գալու որպես ՀՀ կառավարության ֆինանսական գործակալ:

(2-րդ կետը լրաց. 21.04.20 N 585-L)

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակումից հետո անմիջապես:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

2020 թ. մարտի 31
Երևան



Ն. Փաշինյան

ՀԱՇՎԱՊԱՅԱԿԱՆ

ՀԱՇՎԱՌՄԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԲՆԱԳԱԿԱՌ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

13 հունվարի 2020 թ.
ք. Երևան

N 22-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԻՉ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 15.1-րդ հոդվածի 3-րդ կետերը՝

Հրամայում եմ՝

Հաստատել Ֆինանսական ակտիվների Հայաստանի Հանրապետության դասակարգիչը՝ համաձայն հավելվածի:

Տ. Խաչատրյան

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2020 թ. հունվարի 13-ի
N 22-Ն հրամանի





ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՖՅՄՍ-ՆԵՐՈՒՄ

ՆՅՈՒԹՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՏՊԱԳՐՎՈՒՄ Է «ԳՈՐԾՔ» ԱՄՍԱԳՐՈՒՄ

Բաժինը վարում է ՖՅՄՍ-ների միջազգային մասնագետ Ավետիք Մովսիսյանը

Ավետիք Մովսիսյանը դասավանդման և խորհրդատվության մեծ փորձառությամբ ՖՅՄՍ (Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների) մասնագետ է:

Նա պարբերաբար անցկացնում է ՖՅՄՍ-ների խորացված դասընթացներ գլխավոր հաշվապահների, աուդիտորների և այլ ֆինանսական մասնագետների համար: Շուրջ 15-ամյա դասավանդման կարիերայի ընթացքում Ավետիք Մովսիսյանը անցկացրել է ՖՅՄՍ-ների դասընթացներ Հայաստանում գործող շատ առաջատար կազմակերպությունների ֆինանսական մասնագետների համար:

Ավետիք Մովսիսյանը համատեղության կարգով որպես դասախոս աշխատում է մի շարք ուսումնական կենտրոններում և որպես խորհրդատու՝ մի շարք աուդիտորական ընկերություններում:

2009թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ավետիք Մովսիսյանը հրավիրվել է որպես ՖՅՄՍ-ների պաշտոնական թարգմանության խմբի փորձագետ: Նա նաև հեղինակել է ՖՅՄՍ-ներով հաշվապահական հաշվառում վարելուն առնչվող տարբեր հոդվածներ և գրքույկներ:

Որպես իր մասնագիտական ունակությունների հաստատում՝ Ավետիք Մովսիսյանը 2011թ.-ին ACCA-ի կողմից ստացել է ՖՅՄՍ-ների մասնագետի որակավորում (DiplIFR) և հանդիսանում է Հայաստանում այդ որակավորումն ունեցող առաջին մասնագետներից մեկը:

(Սկիզբը՝ 121-րդ և 122-րդ համարներում)

Հոդվածն առաջին անգամ տպագրվում է «Գործք» ամսագրում

ՖՅՄՍ-16 ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 7

Վարձակալության հաշվապահական հաշվառումը վարձակալի մոտ

(Պարզեցված հաշվառման բացառություն)

ՖՅՄՍ 16-ի համաձայն՝ վարձակալը կարող է կարճաժամկետ վարձակալության և ցածրարժեք ակտիվի վարձակալության համար կիրառել հաշվապահական հաշվառման պարզեցված մոտեցում: Այս

մոտեցման հաշվառումը նման է գործառնական վարձակալության հաշվառմանը: Վարձակալի մոտ ակտիվ չի ճանաչվում և վարձավճարները ճանաչվում են որպես ծախս (կամ ներառվում են որևէ ակտիվի ինքնարժեքում՝ ըստ այլ ՖՅՄՍ-ների պահանջների):

Վարձակալության գծով ծախսը ճանաչվում է վարձակալության ընթացքում հավասարաչափ (գծային հիմունքով), բացառությամբ այն դեպքերի, երբ այլ պարբերական հիմունքը ավելի ճիշտ է ներկայացնում վարձակալության շրջանակներում ակտիվի օգտագործումից տնտեսական օգուտների նվազումը:

Կարճաժամկետ վարձակալության գծով պարզեցված հաշվառման մոտեցումը կարող է կիրառվել ըստ ակտիվների դասերի, իսկ ցածրարժեք ակտիվների դեպքում՝ վարձակալություն առ վարձակալություն հիմունքով:

Վարձակալը վարձակալության սկզբին պետք է որոշի վարձակալության ժամկետը՝ ինչպես նշված է սույն հոդվածի գլուխ 3-ում, որի համար վարձատուից կպահանջվի կատարել որոշ վերլուծություններ: 2019թ.-ի դեկտեմբերին Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների Մեկնաբանությունների Կոմիտեն հրապարակել է պարզաբանում՝ ըստ որի՝ հաշվապահական հաշվառման նպատակներով վարձակալության ժամկետը պետք է որոշել պայմանագրի տնտեսական պայմանների ամբողջականությամբ, այլ ոչ միայն պայմանագրային վաղաժամկետ դադարեցման պայմաններով: Սա նշանակում է, որ վարձակալության վաղաժամկետ դադարեցման կամ ժամկետի երկարացման օպցիոնների իրագործելիությունները գնահատելիս պետք է կատարել մանրամասն վերլուծություն 2 կողմերի տեսակետից:

Գործնականում, այն պայմանագրերի գծով, որտեղ կողմերն իրավունք ունեն կարճաժամկետ ծանուցմամբ դադարեցնել վարձակալությունը, անհրաժեշտ կլինի վերլուծել հետևյալը՝

- արդյոք կողմերն ունե՞ն կապակցվածություն: Սովորաբար կապակցվածությունը նշանակում է ընդհանուր շահի առկայություն:

- արդյոք վարձակալը կատարե՞լ է կապիտալ ծախսումներ վարձակալված ակտիվի վրա: Մեկնաբանությունների Կոմիտեի կողմից պարզաբանված է, որ պայմանագրի դադարեցման գծով նշանակալի տուգանքը ներառում է ոչ միայն պայմանագրի կողմին վճարման ենթակա տուգանքը, այլ նաև լրացուցիչ ծախսերը, օրինակ, սարքավորման ապատեղակայման և տեղափոխման գծով:

- արդյոք վարձավճարի չափը համապատասխանո՞ւմ է մնանատիպ ակտիվի վարձակալության համար շուկայում առկա դրույքներին: Սովորաբար շուկայականից տարբերվող վարձավճարը նշանակում է, որ վնաս կրող կողմը կցանկանա դադարեցնել պայմանագիրը:

- արդյոք վաղաժամկետ դադարեցումը նպատակահարմա՞ր կլինի վարձատուին: Եթե վարձատուի համար ակտիվը դիտարկվում է միայն որպես վարձավճարից եկամուտ ստանալու առարկա (օրինակ՝ տարածքը բիզնես կենտրոնում), և վարձավճարները համապատասխանում են շուկայականին, ապա, հավանաբար, վարձատուն չի ցանկանա վաղաժամկետ դադարեցնել պայմանագիրը: Իսկ եթե վարձատուի համար իրատեսական են նաև ակտիվը սեփական նպատակներով օգտագործելու կամ տեսանելի ապագայում վաճառելու այլընտրանքները, ապա հավանական է, որ ապագա որևէ պահին վարձատուն կցանկանա օգտվել վաղաժամկետ դադարեցման իրավունքից:

Օրինակ 9.

- Կազմակերպությունը վարձակալել է a, b և c մնանատիպ տարածքներ՝ առևտրային գործունեություն իրականացնելու նպատակով: Բոլոր վարձատուները չկապակցված կողմեր են և չունեն որևէ այլ տիպի կախվածություն վարձակալից: Բոլոր պայմանագրերի վարձավճարները համապատասխանում են շուկայականին և բոլոր պայմանագրերն ունեն 10 տարի ժամկետ: Կազմակերպությունը չունի մտադրություն և շահագրգռվածություն որևէ վարձակալություն վաղաժամկետ դադարեցնելու:

a պայմանագրով նախատեսված է, որ եթե վարձատուն վաղաժամկետ դադարեցնի պայմանագիրը, ապա պարտավոր է փոխհատուցել վարձակալի վնասները՝ ներառյալ տեղափոխման ծախսերը, անհրաժեշտության դեպքում նոր տարածքի նախապատրաստման ծախսումները, ինչպես նաև պարապուրդից բխող վնասները:

Ե և Շ պայմանագրերով նախատեսված է, որ վարձատուին իրավունք ունի 6 ամիս առաջ ծանուցելով դադարեցնել վարձակալությունը՝ առանց վարձակալի վճարի փոխատուցման: Ե պայմանագրի վարձատուին բիզնես կենտրոն է և տվյալ տարածքից ակնկալում է միայն վարձակալական եկամուտների ստացումը, իսկ Շ պայմանագրի վարձատուին ֆիզիկական անձ է, և չնայած ներկա պահին առկա չեն ոչ մի նախանշաններ, հնարավոր է նա ցանկանա տարածքն օգտագործել սեփական կարիքների համար՝ որպես բնակավայր կամ բիզնես տարածք:

Բոլոր վարձակալություններում առկա է այն ռիսկը, որ վարձատուին կարող է վաղաժամկետ դադարեցնել վարձակալության պայմանագիրը, որի արդյունքում կազմակերպությունը կարող է ունենալ կորուստներ և տարբեր այլ անհարմարություններ: Սակայն ա վարձակալության գծով այդ ռիսկը մինիմալ է, Ե-ի գծով՝ միջին (կամ միգուցե կարելի համարել ցածր ռիսկային, բայց ռիսկայնությունն ավելի բարձր է քան Ե-ի դեպքում), իսկ Շ-ն կհամարվի բարձր ռիսկային:

Եթե կազմակերպությունը բոլոր վարձակալությունների համար գնահատի 10 տարի չեղյալ չհամարվող ժամանակահատված և ֆինանսական հաշվետվություններում դրանք ներկայացնի նմանատիպ ձևով, ապա ֆինանսական հաշվետվությունների փաթեթը չի համարվի արժանահավատ, որովհետև հաշվետվությունն օգտագործողները չեն տեսնի վերևում նկարագրված ռիսկայնությունները, և այդ ռիսկերը չեն արտացոլվի ֆինանսական վերլուծության գործակիցներում:

Ֆինանսական հաշվետվությունների ճշմարիտ ներկայացման առումով խելամիտ կլինի Շ վարձակալությունը դասակարգել որպես կարճաժամկետ (6 ամիս): Իսկ Ե վարձակալությունը հնարավոր կլինի որպես երկարաժամկետ դասակարգել միայն այն դեպքում, երբ խորը վերլուծությունները կվկայեն այն մասին, որ վարձատուին 10 տարիների ընթացքում չի օգտվի առանց վարձակալին վճարի փոխատուցման պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու իր իրավունքից: Ներկա պայմաններում դա հնարավոր կլինի հիմնավորել բացառիկ դեպքերում, քանի որ տնտեսաքաղաքական փոփոխությունները կատարվում են շատ արագ:

Նման հաշվապահական անորոշություններից, ինչպես նաև պոտենցիալ գործառնական վնասներից խուսափելու համար, խրախուսվում է պայմանագրային դրույթներում հստակ արտացոլել կողմերի մտադրությունները:

Շարունակելի...





ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼ

«2020թ. ՀՀ լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի 11-րդ պարբերա-
շրջանի 2-րդ ընտրական փուլին ներկայացվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Հարցաշարի ճիշտ պատասխանները գնահատվում են
2-ական միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորը կազմում է
20 միավոր:

Խնդիրը բաղկացած է 1 հարցից: Հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 10 միավոր, սխալ
պատասխանը՝ 0 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների առավելագույն թիվը կազմում է 30 միավոր:

Երկրորդ փուլին ներկայացված հարցաշարից և խնդրից առավել բարձր միավոր հավաքած
մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի
հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի
որոշման գործընթացին:

Երկրորդ փուլի առաջադրանքների պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնա-
յին հասցեին մինչև 2020թ. հունիսի 30-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն
www.gortsq.am կայքէջում՝ 2020թ. հուլիսի 1-ին:

ՈՒՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, հաշվապահական հաշվառման
միջազգային խորհրդամիջով ոսկեեզր շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու
արարողությունը տեղի կունենա 2021 թվականի փետրվարին՝ Ծաղկածորում:

«2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ»

ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼԻ

ՀԱՐՑԱՇԱՐԸ

Հարց 1. Կազմակերպությունը 2020թ. մարտ ամսվա հաշվեգրված ԱԱՀ-ի գծով պարտավորությունը ճանաչել է 2020թ. փետրվարին: Համալիր հարկային ստուգման արդյունքում հայտնաբերվելու դեպքում կարող է արդյոք կիրառվել տուգանք՝ մարտ ամսվա ԱԱՀ-ի գծով պարտավորության թերի հայտարարագրման մասով՝

ա) այո.

բ) ոչ:

Հարց 2. Պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց տրամադրող եկամուտները հարկվում են՝

ա) 20 տոկոսով.

բ) 23 տոկոսով.

գ) 0 տոկոսով.

դ) համախառն եկամտի 0,25 տոկոսը գերազանցող գումարի 20 տոկոսով:

Հարց 3. Պետության կողմից ծրագրի իրականացման նպատակով տրամադրվող հիմնական միջոցները եկամուտ են ճանաչվում՝

ա) տրամադրման հաշվետու տարվա մեջ.

բ) ծախսագրմանը համամասնորեն.

գ) եկամուտ չեն ճանաչվում:

Հարց 4. Եթե հետադարձ վարձակալությամբ վաճառքը հանգեցրել է ֆինանսական վարձակալության, ապա վաճառված (վարձակալված) ակտիվը՝

ա) պետք է ճանաչվի գնորդ-վարձատուի մոտ.

բ) պետք է ճանաչվի վաճառող-վարձակալի մոտ.

գ) պետք է ճանաչվի գնորդ-վարձատուի մոտ, բացառությամբ այն դեպքերի, երբ վարձավճարների ներկա արժեքը ավելի մեծ է վարձակալված ակտիվի իրական արժեքից:

Հարց 5. Հիմնական միջոցները նյութական ակտիվներ են, որոնք՝

ա) առկա են կազմակերպությունում արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման, վարձակալության տալու կամ վարչական նպատակներով օգտագործելու համար.

բ) նախատեսվում են օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով.

գ) նախատեսվում են օգտագործել մեկ և ավելի գործառնական փուլերի ընթացքում և իրենց արժեքը մաս-մաս փոխանցում են ստեղծվող արտադրանքին.

դ) միաժամանակ բավարարում են «ա» և «բ» կետերի պահանջներին:

Չարց 6. Կազմակերպության դրամարկղում արտարժույթի վերագնահատումից առաջացած փոխարժեքային տարբերությունները դիտվում են որպես՝

- ա) գործառնական գործունեության արդյունքում առաջացող դրամական միջոցների հոսքեր, եթե դրանի արժեքը արտարժույթի նկատմամբ աճել է.
- բ) գործառնական գործունեության արդյունքում առաջացող դրամական միջոցների հոսքեր, եթե դրանի արժեքը արտարժույթի նկատմամբ նվազել է.
- գ) նշված բոլոր պատասխաններն էլ սխալ են:

Չարց 7. Շահագործման մեջ գտնվող հաստոցի վերագնահատումից կուտակված մաշվածության աճի ձևակերպում (նախկինում վերագնահատում կամ արժեզրկում ճանաչված չեն եղել)

- ա) Դեբետ 624
Կրեդիտ 112.
- բ) Դեբետ 724
Կրեդիտ 112.
- գ) Դեբետ 321
Կրեդիտ 112:

Չարց 8. Գույքագրմամբ հայտնաբերված հիմնական միջոցի արտացոլում՝

- ա) Դեբետ 111
Կրեդիտ 628.
- բ) Դեբետ 111
Կրեդիտ 629.
- գ) Դեբետ 111
Կրեդիտ 614:

Չարց 9. Շահութահարկի հաշվարկման նպատակներով որպես եկամուտ ճանաչված (դուրս գրված) կրեդիտորական պարտքի գծով հետաձգված հարկի գումարների արտացոլում (հաշվապահական նպատակներով պարտավորությունը դուրս չի գրվում)

- ա) Դեբետ 151
Կրեդիտ 751.
- բ) Դեբետ 422
Կրեդիտ 751.
- գ) Դեբետ 714
Կրեդիտ 524:

Չարց 10. Տարբեր վայրերում գտնվող համանման նյութերի փոխանակման արտացոլում՝

- ա) Դեբետ 211
Կրեդիտ 211.
- բ) Դեբետ 211
Կրեդիտ 614.
- գ) Դեբետ 714
Կրեդիտ 211:

«2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ»
ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ
ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼԻ
ԽՆԴԻՐԸ

«Ա» ՀԿ-ն հիմնադրվել է 2019թ.-ին: 2019թ.-ի շրջանառությունը կազմել է 62 մլն դրամ: Կազմակերպությունը 2020թ.-ին ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն չի ներկայացրել: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է հետևյալ գործարքները՝

Եկամուտներ

Հ/Հ	Գործարք	Գումար (հազ. դրամ)
1	Անհատույց ստացված արտադրական սարքավորում	15000
2	Ծառայությունների մատուցումից եկամուտ	48 000
3	Ապրանքների իրացումից եկամուտ	58 000
4	Վարձակալությունից եկամուտ	18 000

Ծախսեր՝

Հ/Հ	Գործարք	գումար (հազ. դրամ)
1	Հիմնական միջոցների մաշվածություն	12 000
2	Ծառայությունների մատուցման հետ կապված ծախսեր	32 000
3	Ապրանքների ինքնարժեք	62 000
4	Աշխատավարձ	6 600

Լրացուցիչ տեղեկատվություն՝

1. Սարքավորումը ստացել է 01.04.2020թ.-ին:
2. Արտադրական սարքավորումը շահագործման է հանձնվել 01.05.2020թ.-ին, սակայն տեղակայման և գործարկման նշանակալի աշխատանքներ չի պահանջվել:
3. Եկամուտները հաշվեգրվել են խնդրում նկարագրված հաջորդականությամբ:
4. Բոլոր ծախսերի մասով եղել են ծախսերը հիմնավորող փաստաթղթեր:

Որոշել 2020թ.-ի հարկվող շահույթը և շահութահարկի գումարը:




«2020Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ»

**ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ
ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**



Անուշ Սաքեյան
Երևանի պողոտայա
խողովակների գործարան
«Մետալ Ստիլ» ՓԲԸ
գլխավոր հաշվապահի
տեղակալ
(15) միավոր



Նաիրա Մարտիրոսյան
«ԷՅ ԱՅ ԹԻ ՍԻ» ՍՊԸ
Հաշվապահ
(14) միավոր




Հակոբ Մարտիրոսյան
ՀՀ Գեղարքունիքի
մարզի ճամբարակի
համայնքապետարանի
աշխատակազմի
ֆինանսատնտեսական բաժնի
պետ
(14) միավոր



Լուիզա Սարաֆյան
ՀՊՏՀԳՄ
պետական գնումների
մասնագետ-հաշվապահ
(13) միավոր




Սևանա Գրիգորյան
«ԷՅ ԱՅ ԹԻ ՍԻ» ՍՊԸ
Տնօրեն
(13) միավոր




Արման Ամրոյան
«Հայ-ռուսական
համալսարան» ՊՈԱԿ
Գլխավոր հաշվապահ
(13) միավոր



Արմինե Խատիկյան
ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի
համայնքապետարան
Աշխատակազմի
գլխավոր
մասնագետ-հաշվապահ
(12) միավոր



Գոհար Բաղդասարյան
«Արշավիր և Պայծառ
Աբրահամյաններ»
բարգործական հիմնադրամ
հաշվապահ
(12) միավոր




Նարինե Ծականովա
Ոսկեվազի
համայնքապետարան
Առաջատար մասնագետ
(12) միավոր



Սոնա Մաղաթյան
ՀՀ Արմավիրի մարզի
Եղեգնուտի
համայնքապետարան
Աշխատակազմի գլխավոր
մասնագետ
(12) միավոր




Կարեն Զարանյան
«Կապանի
լեռնահարստացման
կոմբինատ» ՓԲԸ
Տնտեսագետ
(12) միավոր



Հայկ Թովմասյան
«Յուլիեյ» ՓԲԸ
Գլխավոր հաշվապահ
(12) միավոր




Էմնա Պիրոգովա
Լոռու մարզային
հոգեմյարդաբանական
դիսպանսեր ՊՓԲԸ
Գլխավոր հաշվապահ
(11) միավոր



Իսկուհի Մարգարյան
ՀՀ Գեղարքունիքի
մարզի Լճաշենի
համայնքապետարան
Առաջատար
մասնագետ-հաշվապահ
(11) միավոր



Մարիամ Մանուկյան
«Ման Ինն» ՍՊԸ
Հաշվապահական խմբի
ղեկավար
(11) միավոր




Քրիստինա Մաստրյան
«ԷՅԱՅԹԻՍԻ» ՍՊԸ
Հաշվապահ
(11) միավոր



Արմինե Մուրայան
Դսեղի համայնքապետարան
Առաջատար
մասնագետ-հաշվապահ
(10) միավոր



Արա Բաղդասարյան
ՀՀ Արագածոտնի
մարզ՝ Կարբի
համայնքապետարան
Հաշվապահ
(10) միավոր



Դավիթ Մարտիրոսյան
«Չաարատ Կապան» ՓԲԸ
Հաշվապահ
(10) միավոր



Շուշան Աբրահամյան
Սարուխանի
համայնքապետարան
Առաջատար
մասնագետ՝ հաշվապահ
(9) միավոր



ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱԿԱՌ



ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԱՅԻՆ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏՈՐ

Հարգելի ընթերցող

«Գործք» ամսագրի սույն՝ 124-րդ համարում Ձեզ ենք ներկայացնում ցանցային ադմինիստրատորի (պաշտոնի) նկարագրությունը և աշխատանքի անվտանգության հրահանգը:

Մեր կողմից ներկայացված պաշտոնների նկարագրությունները և աշխատանքի անվտանգության հրահանգները մշակվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ.-ի N872-Ն հրամանով հաստատված աշխատողների մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների դասակարգչի, ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ. N873-Ն հրամանով հաստատված զբաղմունքների դասակարգչի (ՀԴ-009-2013), ISO-88-ի, պահանջներին համապատասխան:

Պաշտոնների նկարագրությունները և աշխատանքի անվտանգության հրահանգները մեր կողմից տպագրվում են «Գործք» ամսագրում, որպեսզի օգնենք գործատուներին կիրառելու

Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի (ընդունված 03.05.1996թ.-ին՝ Ստրասբուրգում, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 01.03.2004թ.) 2-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 85-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Պաշտոնների ներկայացման առաջնահերթությունը որոշում էք Դուք, իսկ մենք ներկայացնում ենք դրանք՝ ըստ Ձեր պահանջի:

Ցանցային ադմինիստրատորի (պաշտոնի) նկարագրությունը և աշխատանքի անվտանգության հրահանգը Հայաստանի Հանրապետությունում գործող աշխատողների, մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների ընդհանուր թվաքանակի՝ 10916-ի մեջ թվով ընդամենը 39-րդն է: Նախորդ 38 պաշտոնների նկարագրության և աշխատանքի անվտանգության հրահանգների մասին կարող եք ծանոթանալ «Գործք» ամսագրի նախորդ համարներում՝ սկսած 79-րդ համարից:





Հաստատված է
« _____ » -ի տնօրենի
202_թ.-ի « _____ » « _____ »-ի թիվ _____ հրամանով

ՑԱՆՑԱՅԻՆ ԱՂՄԻՆԻՍՏՐԱՏՈՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Պաշտոնի անվանումը՝

Ցանցային ադմինիստրատոր.

2. Ջբաղմունքի դասակարգչի կոդը՝ 2131

3. Մասնագիտության և մասնագիտացման կոդը՝ 2320001

4. Աշխատանքի բնույթը՝

Ցանցային ադմինիստրատորի աշխատանքը պատկանում է ծառայողների խմբին:

5. Աշխատանքի պայմանները՝

Ցանցային ադմինիստրատորի աշխատանքը համարվում է աշխատանքի նորմալ պայմաններում կատարվող աշխատանք:

6. Աշխատաժամանակի ռեժիմը՝

Ցանցային ադմինիստրատորի աշխատաժամանակի ռեժիմը սահմանվում է « _____ » -ի (այսուհետ՝ կազմակերպություն) ներքին կարգապահական կանոններով:

7. Հիմնական գործառույթները՝

7.1. զբաղվել սերվերի ենթակառուցվածքների կառավարմամբ, իրականացնել ցանցային սարքավորումների սպասարկում և կարգավորում.

7.2. սերվերների և աշխատանքային կայանների վրա տեղադրել ցանցային ծրագրային ապահովում և սերվերի վրա ուրվագծել համակարգը.

7.3. ֆայլ-սերվերների, սերվերների ղեկավարման համակարգերի տվյալների բազաները և աշխատանքային կայաններն ապահովել ինտեգրված ծրագրային համակարգով.

7.4. պահպանել ծրագրային ապահովման սերվերի և աշխատող կայանների աշխատանքային կայուն վիճակը.

7.5. գրանցել օգտվողներին, նշանակել նույնականացուցիչներ և գաղտնաբաներ, օգտվողներին սովորեցնել ցանցում կատարվող աշխատանքները, վարել արխիվներ, պատասխանել օգտատերերի հարցերին, որոնք առնչվում են ցանցում տարվող աշխատանքներին.

7.6. վերահսկել ցանցային ռեսուրսների օգտագործումը.

7.7. ապահովել օգտատերերի մուտքը լոկալ և գլոբալ ցանցներ.

7.8. ապահովել տվյալների ժամանակին պատճենահանումը և պահեստավորումը.

7.9. համակարգի և ցանցային սարքավորումների խափանումների ժամանակ մասնակցել դրանց աշխատունակության վերականգման աշխատանքներին.

7.10. ապահովել ցանցային, միջցանցային փոխազդեցության անվտանգությունը.

7.14. վերահսկել ծառայություններ մատուցող ընկերությունների մասնագետների կողմից կազմակերպությանը մատուցվող սարքավորումների մոնիտորինգային աշխատանքները.

7.15. իրականացնել ստանդարտ գործընթացների մշտադիտարկման, կրկնօրինակման, ավտոմատացման աշխատանքներ.

7.16. վարել կազմակերպության սերվերներին առնչվող ողջ տեխնիկական թղթաբանությունը.

7.17. իրականացնել անսարքությունների օպերատիվ դիագնոստիկա և վերացում.

7.18. օգտատերերի հետ պարբերաբար իրականացնել սարքավորումներ հետ աշխատելու ուսուցում.

7.23. տիրապետել և կիրառել իր գործունեությանը վերաբերող գործող նորմատիվ փաստաթղթերը.

7.24. իրականացնել աշխատանքի անվտանգության և շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերի պահանջները, հետևել աշխատանքների անվտանգ կատարման նորմերին և մեթոդներին:

8. Ցանցային ադմինիստրատորի գիտելիքների և աշխատանքային փորձի նկատմամբ պահանջները՝

ա) Ցանցային ադմինիստրատորի պաշտոնին նշանակվում է այն անձը, որը ստացել բարձրագույն կրթություն՝ բակալավրի աստիճանով կամ բարձրագույն կրթություն՝ մագիստրոսի աստիճանով, ունի ոչ պակաս, քան 2 տարվա աշխատանքային փորձ:

բ) Ցանցային ադմինիստրատորից պահանջվում է կատարել միջին բարդության կամ բարդ կամ առավել բարդ աշխատանքներ:

գ) Ցանցային ադմինիստրատորը պետք է իմանա.

- ✓ տեղեկատվական անվտանգության ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերը.
- ✓ ծրագրավորման հիմունքները.
- ✓ շուկայական տնտեսության հիմունքները.
- ✓ ՀՀ աշխատանքային օրենսդրությունը.
- ✓ աշխատանքի անվտանգության, արտադրական սանիտարիայի և հակահրդեհային պաշտպանության կանոնները և նորմերը.
- ✓ սերվերային OC-Windows-ը՝ ողջ ծավալով, ActiveDirectory ցանցային ծառայությունների աշխատանքի սկզբունքները, DNS, DHCP, Proxy, SIP, VLAN, NAT, սերվերների սարքավորումային մասերը և վիրտուալացման համակարգերը (Hyper-V).
- ✓ ցանցային սարքավորումների հետ աշխատելու ունակությունները. HP, Mikrotik, Dlink layer-2 switches, «այ-փի» արձանագրության հեռախոսային կապով աշխատանքի պրակտիկան.
- ✓ ցանցերը VPN-ով միավորելու սկզբունքները, IPSec տեխնոլոգիան.
- ✓ MySQL, Iptables, tcpdump, apache, asterisk, JIRA, Confluenc ծրագրերը.
- ✓ աշխատանքի ավտոմատիզացման համար սկրիպտներ գրելու մեթոդները.
- ✓ մշտադիտարկման (Zabbix) համակարգերի հետ աշխատելու հմտությունները:

9. Իր գործունեության ընթացքում ցանցային ադմինիստրատորը ղեկավարվում է՝


Կազմակերպության տնօրենի կարգադրություններով, հրամաններով, որոշումներով, ներքին կարգապահական կանոններով, իրականացվող աշխատանքի մեթոդական նյութերով, սույն պաշտոնեական հրահանգով, աշխատանքի անվտանգության, անվտանգության տեխնիկաների, արտադրական սանիտարիայի և հակահրդեհային պաշտպանության կանոններով:

10. Պաշտոնի նշանակումը՝

Ցանցային ադմինիստրատորին նշանակում և պաշտոնից ազատում է (աշխատանքային պայմանագիրը կնքում և աշխատանքային պայմանագիրը լուծում է) կազմակերպության տնօրենը:

11. Կառուցվածքային ստորաբաժանումը՝

Ցանցային ադմինիստրատորի պաշտոնն ընդգրկված է Կազմակերպության ներքին կառուցվածքային ստորաբաժանում համարվող _____ բաժնում՝



12. Ենթակայությունը՝

Ցանցային ադմինիստրատորը անմիջականորեն ենթարկվում է _____ -ին:

13. Ցանցային ադմինիստրատորի իրավունքները, պարտականությունները՝

13.1. Ցանցային ադմինիստրատորն իրավունք ունի՝



- ✓ ստանալ օրենսդրությամբ նախատեսված բոլոր սոցիալական երաշխիքները,
- ✓ պահանջել աջակցություն՝ իր պաշտոնական պարտականությունների իրականացման և իրավունքների իրացման համար.
- ✓ պաշտոնական պարտականությունները իրականացնելու համար պահանջել կազմակերպատեխնիկական պայմանների ստեղծում, անհրաժեշտ սարքավորումների և գույքի տրամադրում.
- ✓ ծանոթանալ իր գործունեության հետ կապված փաստաթղթերի նախագծերի հետ.
- ✓ բարձրացնել մասնագիտական որակավորումը.
- ✓ ի հայտ եկած խախտումների և անհամապատասխանությունների վերացման ուղղությամբ առաջարկություններ ներկայացնել անմիջական ղեկավարին, տնօրենությանը.
- ✓ պահանջել աշխատանքի անվտանգ պայմանների ապահովում:

13.2. Ցանցային ադմինիստրատորը պարտավոր է՝

- ✓ պատշաճ իրականացնել անմիջական ղեկավարի ծառայողական հրահանգները.
- ✓ պատշաճ իրականացնել իր աշխատանքային գործառույթները և հանձնարարված առաջադրանքները.
- ✓ իրավաչափորեն օգտագործել սեփական ծառայողական լիազորությունները, դրանք չօգտագործել անձնական նպատակներով.
- ✓ հանձնարարված, կատարված աշխատանքի վերաբերյալ տալ հավաստի տեղեկատվություն.
- ✓ կազմակերպության գործունեության և դրա աշխատողների անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային և այլ կանոնների ի հայտ եկած խախտումների դեպքում դրանց վերացման դեմ գործողություններ ձեռնարկել.
- ✓ պահպանել աշխատանքային կարգապահական կանոնները.
- ✓ հետևել սանիտարական կանոններին.
- ✓ աշխատաժամանակն օգտագործել արդյունավետ:

14. Ցանցային ադմինիստրատորը պատասխանատվություն է կրում՝


- 14.1. սույն հրահանգով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և (կամ) իր իրավունքների չիրացման համար.
- 14.2. ներքին կարգապահական, աշխատանքի անվտանգության, անվտանգության տեխնիկաների, արտադրական սանիտարիայի և հակահրդեհային պաշտպանության կանոններին չհետևելու համար.
- 14.3. կազմակերպության կոմերցիոն գաղտնիք հանդիսացող տեղեկատվության հրապարակման համար.
- 14.4. կազմակերպության ներքին նորմատիվ փաստաթղթերի պահանջների և ղեկավարության օրինական կարգադրությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.
- 14.5. իր գործունեության ընթացքում կատարած իրավախախտումների համար.
- 14.6. իր գործունեության ընթացքում նյութական վնաս պատճառելու համար.
- 14.7. տրամադրված ծառայողական լիազորությունների ոչ օրինաչափ օգտագործելու, ինչպես նաև դրանք անձնական նպատակով օգտագործելու համար:

**Չամաձայնեցված է՝
անմիջական ղեկավարի հետ՝** _____

/ստորագրությունը / /անվանատառը, ազգանունը/
«__» «_____» 202_թ.

**Աշխատանքի նկարագրությանը
ծանոթացա՝** _____

/ստորագրությունը / /անվանատառը, ազգանունը/
«__» «_____» 202_թ.



Հաստատված է
«_____» -ի տնօրենի
202_թ.-ի «_____» «___»-ի
թիվ ___ հրամանով

ՑԱՆՑԱՅԻՆ ԱՂՄԻՆԻՍՏՐԱՏՈՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀՐԱՅԱՆԳՈՒ

I. Աշխատանքի անվտանգության ընդհանուր պահանջները

1. Ցանցային աղմինիստրատորի պաշտոնին նշանակվում են 18 տարին լրացած, համապատասխան կրթություն ունեցող, բժշկական զննություն անցած և առողջական վիճակից ելնելով հակացուցումներ չունեցող, աշխատանքի անվտանգության նախնական հրահանգավորում, աշխատանքի անվտանգության պահանջների ստուգում, հրդեհային անվտանգության ուսուցում և կանոնների իմացության ստուգում, էլեկտրական անվտանգության ուսուցում և ատեստավորում անցած անձինք:

2. Ցանցային աղմինիստրատորը պարտավոր է՝

- ✓ իմանալ և հետևել սույն հրահանգի պահանջներին, աշխատանքի անվտանգության և արտադրական սանիտարիայի, էլեկտրական անվտանգության կանոններին և նորմերին, ներքին կարգապահական կանոններին.
- ✓ հետևել հրդեհային անվտանգության պահանջներին, իմանալ հրդեհի ազդարարման ազդանշանները, տրվող ազդանշանների դեպքում կատարվող գործողությունների կարգը, հրդեհաշիջման միջոցների տեղակայվածությունը և կարողանալ դրանցից օգտվել, իմանալ հրդեհի դեպքում տարահանման ուղիները.
- ✓ իմանալ դեղարկղիկի տեղակայվածությունը և կարողանալ տուժողին առաջին օգնություն ցուցաբերել.
- ✓ իմանալ արտակարգ պատահարների դեպքում գործողությունների կարգը:

3. Ցանցային աղմինիստրատորը պետք է անցնի՝

- ✓ տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ աշխատանքի անվտանգության պահանջների իմացության հերթական ստուգում.
- ✓ տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ էլեկտրական անվտանգության պահանջների իմացության հերթական ստուգում.

4. Աշխատանքի ընթացքում ցանցային աղմինիստրատորի վրա կարող են ազդել հետևյալ վտանգավոր և վնասակար արտադրական գործոնները.

- ✓ էլեկտրամագնիսական ճառագայթման բարձր մակարդակը.
- ✓ ուլտրամանուշակագույն և ինֆրակարմիր ճառագայթման բարձր մակարդակները.
- ✓ ստատիկ էլեկտրականության լարվածության բարձր մակարդակը.
- ✓ աշխատանքային տարածքում՝ օդում դրական և բացասական իոնների բարձր մակարդակը.
- ✓ լուսավորվածության բարձր կամ ցածր մակարդակը,
- ✓ ուղիղ և արտացոլված պայծառության բարձր մակարդակը,
- ✓ տեսադաշտում պայծառության անհավասար տեղաբաշխվածությունը,
- ✓ լուսային հոսքի լարման բարձր մակարդակը.
- ✓ էլեկտրական շղթայում լարվածության բարձր մակարդակը, որի միացումը կարող է անցնել մարդու մարմնի միջով.

- ✓ աշխատանքային տարածքի օդի փոշոտվածության բարձր մակարդակը,
- ✓ աշխատանքը բարձրության վրա,
- ✓ փաստաթղթերի սուր ծայրերը:

5. Այն գույքին, որի հետ աշխատում է և այն տարածքին, որտեղ աշխատում է ցանցային ադմինիստրատորը ներկայացվում են հետևյալ պահանջները՝

- ✓ էլեկտրական հոսանք սպառող սարքավորումների կորպուսները պետք է հողանցված (չեզոք) լինեն: Խստորեն արգելվում է որպես հողանցման կոնտուր օգտագործել շոգեմուղային, ջրատար, գազատար, ջեռուցման և այլ խողովակներ, ռադիատորներ և այլն.
- ✓ սնուցող հոսանքալարերը պետք է ունենան փոխանցվող հզորությանը համապատասխանող չխախտված մեկուսացում և հատվածք.
- ✓ սենյակում գտնվող կահույքը, գրասենյակային սարքավորումները, սարքերը և դրանց գունավորումը, ինչպես նաև սենյակի պատերի գունավորվածությունը և կառուցվածքը պետք է համապատասխանեն էրզոնոմիկայի և հրդեհային անվտանգության պահանջներին.
- ✓ այն սենյակը, որտեղ գտնվում է անձնական համակարգիչը և սերվերը՝ սանիտարական և անվտանգության մյուս նորմերին համապատասխան պետք է սարքավորված լինեն՝ լուսավորվածության համակարգերով (ըստ անհրաժեշտության բնական կամ արհեստական, ընդհանուր կամ կոմբինացված), օդափոխության, լավորակման և ջեռուցման համակարգով, էլեկտրական հոսանքի հարվածից պաշտպանվելու սարքավորումներով (պաշտպանիչ հողանցում, չեզոքացում), պաշտպանիչ անջատման սարքով, հրդեհաշիջման առաջնային միջոցներով.
- ✓ սարքավորումները պետք է պահպանվեն սարքին վիճակում, տեղակայվեն տեխնոլոգիական գործընթացով նախատեսված վայրերում, չխանգարեն աշխատանքին, ազատ տեղաշարժին և երթևեկությանը.
- ✓ կիրառվող սարքավորումների բոլոր տեսակները պետք է ունենան շահագործման հրահանգներ, որոնք կպարունակեն անվտանգ սպասարկման պահանջներ.
- ✓ սարքավորումները պետք է օգտագործվեն ըստ նշանակության և կիրառվեն արտադրողի կողմից նախատեսված պայմաններում:

6. Ցանցային ադմինիստրատորը պետք է իմանա և հետևի անձնական հիգիենայի պահանջներին: Սնվի, ծխի, հանգստանա միայն դրանց համար նախատեսված շինություններում և վայրերում: Ջուրը պետք է խմի դրա համար նախատեսված սարքավորումներից: Աշխատատեղում պետք է մաքրություն պահպանի:

7. Արգելվում է աշխատատեղում սպիրտային խմիչքների կիրառումը և աշխատատեղ ոչ սթափ, թմրանյութային կամ թունավոր արբացության վիճակում ներկայանալը:

8. Ցանցային ադմինիստրատորը պարտավոր է տնօրենությանն անմիջապես հայտնել մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող ցանկացած իրավիճակի, արտադրությունում տեղի ունեցած յուրաքանչյուր դժբախտ պատահարի, կամ սեփական առողջության վատթարացման, այդ թվում՝ խիստ մասնագիտական հիվանդության (թունավորման) առաջացման, ինչպես նաև սարքավորումների, սարքերի վրա նկատված բոլոր թերությունների մասին:

9. Աշխատելիս անհրաժեշտ է հետևել ներքին կարգապահական կանոններին, աշխատանքի և հանգստի սահմանված ռեժիմներին

10. Սույն աշխատանքի անվտանգության պահանջները պարտադիր են ցանցային ադմինիստրատորի համար: Այդ պահանջների չիրականացումը դիտարկվում է որպես աշխատանքային կարգապահության խախտում և ենթակա է պատասխանատվության ՀՀ օրենսդրության համապատասխան:

II. Աշխատանքի անվտանգության պահանջներն աշխատանքները սկսելուց առաջ

11. Իրականացնել անձնական համակարգի վիզուալ դիտում, համոզվել վարդակների, խրոցակների երկժանիների, սնուցող հոսանքալարերի սարքին լինելու հարցերում:

12. Հանդգվել, որ միացվող սարքավորումների կորպուսի օդափոխության անցքերը թղթով կամ այլ միջոցներով ծածկված չեն:

13. Անձնական համակարգիչը միացնել 220Վ ցանցին:

14. Արգելվում է ցանցային սարքավորումները միացնել թաց ձեռքերով:

15. Կարգավորել աշխատատեղի լուսավորվածությունը, հանդգվել, որ աշխատատեղն ապահովված է բավարար լուսավորվածությամբ, էկրանին չեն թափանցում արտացոլանքներ, ինչպես նաև բացակայում է հանդիպակաց լուսային հոսքը դեպի էկրան:

16. Սարքավորումների, հոսանքալարերի որևէ անսարքության հայտնաբերման դեպքում այդ մասին հայտնել անմիջական ղեկավարին և մինչև դրանց վերացումը չանցնել աշխատանքի:

III. Աշխատանքի անվտանգության պահանջներն աշխատանքի ընթացքում

17. Ենթարկվել ներքին կարգապահական կանոններին և աշխատանքային գործառույթներն իրականացնել աշխատանքի նկարագրության համաձայն:

18. Աշխատանքային ողջ օրվա ընթացքում աշխատատեղում կարգ ու կանոն և մաքրություն պահպանել:

19. Սարքավորումների բոլոր օդափոխության անցքերը բաց պահել:

20. Հետևել սանիտարահիգիենիկ պահանջներին:

21. Հետևել սարքավորումների շահագործման կանոններին՝ սարքավորումների շահագործման հրահանգներին համապատասխան:

22. Հետևել, որպեսզի էկրանից աչք ընկած հեռավորությունը 60-80 սմ լինի:

23. Հետևել, որպեսզի սարքավորումների, սարքերի և աշխատատեղերի միջև անցումները, ինչպես նաև տարահանման ուղիները թափփված չլինեն:

24. Ծայրամասային սարքավորումների անջատատեղերի ինտերֆեյսային հոսանքալարերի փոխարկումն իրականացնել միայն անջատված սնուցման դեպքում:

25. Սանդղադր-ծեռնասանդղադր կիրառելիս անհրաժեշտ է նախապես ստուգել դրանց սարքինությունը: Արգելվում է կիրառել պատահական հենակալներ (տուփեր, աթոռներ և այլն): Սանդղադր-ծեռնասանդղադրներն աղեղալարերին պետք է ունենան ռետինե ծայրակալներ:

26. 1,3 մետրից բարձր բարձրության վրա աշխատանքներ կատարելիս ցանցային ադմինիստրատորը կարտավոր է կիրառել մոնտաժման գոտի:

27. Աշխատանքի ընթացքում արգելվում է՝

- ✓ միացրած սնուցման դեպքում դիպչել համակարգային բլոկի հետին պանելին.
- ✓ միացրած սնուցման դեպքում իրականացնել ծայրամասային սարքավորումների անջատատեղերի ինտերֆեյսային հոսանքալարերի միացում.
- ✓ համակարգային բլոկի (պրոցեսորի), մոնիտորի, ստեղնաշարի աշխատանքային, տպիչ սարքերի և այլ մակերեսներ թույլ տալ խոնավության ներթափանցում.
- ✓ աշխատատեղը ծանրաբեռնել թղթե թափոններով և այլ առարկաներով.
- ✓ բարձրության վրա աշխատանքը կատարել պատահական հենակալներից (տուփ, տակառ և այլն):

28. Կազմակերպության տարածքում և սենյակներում հետևել ներքին կարգապահական, աշխատանքային վարքագծի կանոններին:

29. Աշխատատեղում չսնվել, չժխել:

30. Վատ ինքնազգացողության դեպքում դադարեցնել աշխատանքը, տեղեկացնել աշխատանքների ղեկավարին և բժիշկի դիմել:

IV. Աշխատանքի անվտանգության պահանջներն վթարային իրավիճակներում

31. Ցանկացած վթարային իրավիճակում կան աշխատողների կյանքին և առողջությանը սպառնացող վտանգի դեպքում անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքը, այդ մասին հայտնել ղեկավարին, գործողություններ ձեռնարկել այդպիսի իրավիճակների և վտանգների վերացման ուղղությամբ:

32. Սարքավորումների մետաղական մասերում լարվածության (էլեկտրական հոսանքի ազդեցության զգացողության) հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է սարքավորումը անջատել ցանցից և այդ մասին հայտնել անմիջական ղեկավարին:

33. Ծխի և հրդեհի առաջացման դեպքում անմիջապես ազդարարել հրդեհային տագնապ, առակա հրդեհաշիջման առաջնային միջոցներով հրդեհի լիկվիդացման գործողություններ ձեռնարկել, տեղեկացնել ղեկավարությանը: Անհրաժեշտության դեպքում հրշեջ ծառայությանը կանչել:

34. Արգելվում է լարվածության տակ գտնվող հոսանքալարերի և սարքավորումների մարման համար կիրառել ջուր և փրփրային կրակմարիչներ, քանի որ դրանք հանդիսանում են հոսանքի լավ հաղորդիչներ: Այդ նպատակով կիրառվում են ածխաթթվային և փոշային կրակմարիչներ:

35. Շինության ներսում ծխի և կրակի առկայության պարագայում տեղաշարժվել պատերի երկայնքով կռացած կամ սողալով, շնչառությունը թեթևացնելու համար բերանը և քիթը փակել ջրով թրջած թաշկինակով, կրակի միջով տեղաշարժվելիս գլուխը փակել վերնազգեստով կամ ծածկոցով, հնարավորության դեպքում վրան ջուր լցնել, այրված հագուստը հանել կամ հանգցնել, աշխատողի հագուստի մեծամասնության այրման դեպքում նրան ամուր փակել կտորով, բայց գլուխը չփակել:

36. Դժբախտ պատահարի դեպքում անմիջապես տուժողին ազատել տրավմատիկ գործոնի ազդեցությունից, տուժողին առաջին օգնություն ցուցաբերել, անհրաժեշտության դեպքում շտապ օգնություն կանչել: Հնարավորության դեպքում, եթե դա չի սպառնում շրջապատողների կյանքին և առողջությանը, պահպանել այն պայմանները, որոնց դեպքում տեղի է ունեցել դժբախտ պատահարը՝ դժբախտ պատահարի առաջացման պատճառների հետաքննության համար, կամ դա ֆիքսել լուսանկարով կամ տեսախցիկով: Այդ մասին հայտնել ղեկավարին կամ աշխատանքի անվտանգության մասնագետին:

37. Ինքնազգացողության վատթարացման, աչքերում ծակոցի առաջացման, տեսողության կտրուկ վատթարացման (հայացքը կենտրոնացնելու անհնարինության և այլն), մատներում և ձեռքերի դաստակներում ցավի առաջացման, սրտխփոցի ուժեղացման դեպքերում անմիջապես լքել աշխատատեղը, պատահարի մասին հայտնել ղեկավարին և դիմել բժշկական հաստատություն:

V. Աշխատանքի անվտանգության պահանջներն աշխատանքներն ավարտելուց հետո

38. Էլեկտրական ցանցից անջատել համակարգչի և բոլոր ծայրամասային սարքավորումների սնուցումը:

39. Ստուգել սենյակը, փակել բոլոր պատուհանները, վերնափեղկերը և անջատել լույսը:

40. Կարգի բերել աշխատատեղը, հեռացնել թղթի թափոնները:


41. Ձեռքերը օճառով լվանալ:

42. Անմիջական ղեկավարին հայտնել աշխատանքի ընթացքում ի հայտ եկած բոլոր խախտումների և դրանց վերացման դեմ ձեռնարկված միջոցների վերաբերյալ:

Հրահանգին ծանոթացա՝

/ստորագրությունը/

/անունը, ազգանունը, ամսաթիվը/



«2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»

ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՇՐՋԱՆԻ II ՓՈՒԼ

«2020թ. ՀՀ մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ» անվանակարգում հայտարարված մրցույթի 11-րդ շրջանի երկրորդ փուլին ներկայացվում է հինգ հարցից բաղկացած մեկ հարցաշար, մեկ խնդիր, առաջադրանքներ՝ «Հակասություններ և բացահայտումներ», «Կազմակերպվածություն և համակարգվածություն», «հոգեմտածողություն» թեմաներից:

Հարցաշարի հարցերի ճիշտ պատասխանները կգնահատվեն յուրաքանչյուրը 2 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորների թիվը կազմում է 10 միավոր:

Խնդրի ճիշտ պատասխանը կգնահատվի 5 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր: Խնդրի առավելագույն միավորների թիվը կազմում է 5 միավոր:

Հակասությունների բացահայտման առաջադրանքի ճիշտ պատասխանը կգնահատվի 3 միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր:

«Կազմակերպվածություն և համակարգվածություն» թեմայի առաջադրանքով կորոշվի մասնակցի կառավարման հմտությունները՝ հանդիպում (քննարկում) կազմակերպելիս: Ճիշտ պատասխանները կգնահատվեն 0.5 միավոր, իսկ սխալ պատասխանը՝ 0 միավոր:

«Հոգեմտածողություն» խորագրի ներքո ներկայացվող պատկերների ընտրությամբ կորոշվի մրցույթի մասնակիցների պատկերացումները ղեկավարի կերպարի մասին: Եթե պատասխանը համընկնի ղեկավարի կերպարի վերաբերյալ աշխարհի ամենահայտնի հոգեբանների կարծիքի հետ, կգնահատվի 2 միավոր, եթե ոչ՝ 0 միավոր:

Երկրորդ փուլին ներկայացված առաջադրանքների ընդհանուր միավորների առավելագույն թիվը գերազանցում է 25 միավորը:

Երկրորդ փուլին ներկայացված առաջադրանքներից և I-II փուլերի հաշվով առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Երկրորդ փուլին ներկայացված առաջադրանքների պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2020թ. հունիսի 30: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում՝ 2020թ. հուլիսի 1-ին:

ՌԻՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, HR-ի միջազգային խորհրդանիշով ոսկեպատ շքանշանը, հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2021 թվականի փետրվարին՝ Ծաղկածորում:

«2020Թ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»

ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԸ

1. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 186-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ոչ աշխատողի մեղքով պարապուրդի ժամանակ աշխատողին չի առաջարկվում նրա մասնագիտությանը, որակավորմանը համապատասխանող այլ աշխատանք, որը նա կարող էր կատարել առանց իր առողջությանը վնաս պատճառելու, ապա աշխատողին պարապուրդի յուրաքանչյուր ժամվա համար վճարվում է մինչև պարապուրդը նրա միջին ժամային աշխատավարձի առնվազն երկու երրորդի չափով, սակայն ոչ պակաս, քան օրենսդրությամբ սահմանված նվազագույն ժամային դրույքաչափը: Գործատուն ո՞ր դեպքում է պարտավոր պարապուրդի ընթացքում աշխատողին վճարել աշխատանքային պայմանագրում սահմանված աշխատավարձի 100 տոկոսը (հիմնավորել):

- ա) ոչ մի դեպքում: Գործատուն նման պարտավորություն չունի, քանի որ օրենսդրությամբ նման պարտավորություն գործատուի համար սահմանված չէ:
- բ) պարապուրդի համար աշխատողին աշխատավարձը 100 տոկոսով վճարելը ոչ թե պարտավորություն է, այլ աշխատողի նկատմամբ սոցիալական պատասխանատվություն:
- գ) «ա» և «բ» պատասխանները սխալ են:

2. Եթե գործատուն գտնում է, որ նախատեսված աշխատանքում (պաշտոնում) աշխատողի համապատասխանության ստուգման նպատակով սահմանված փորձաշրջանի ընթացիկ արդյունքներով աշխատողը չի համապատասխանում առաջադրված պահանջներին, ապա կարող է մինչև փորձաշրջանի ժամկետը լրանալը աշխատողին ազատել աշխատանքից՝ այդ մասին երեք օր առաջ գրավոր ձևով ծանուցելով նրան: Եթե ծանուցման ժամկետի ավարտից 2 օր առաջ աշխատողը հիվանդացել է և նրան տրվել է ժամանակավոր անաշխատունակության թերթիկ, ապա ո՞ր օրն է համարվում ծանուցման ժամկետի վերջին օր՝

- ա) ծանուցման մեջ նշված վերջին օրը:
- բ) ծանուցման ժամկետի վերջին օրը երկարաձգվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալու օրերի չափով:
- գ) ծանուցման ժամկետի վերջին օրը երկարաձգվում է ժամանակավոր անաշխատունակության թերթիկում նշված օրերի չափով:

3. Օրական 4 ժամ աշխատաժամանակով աշխատողի հերթափոխային աշխատանքը համընկել է գիշեր ժամանակին: Գիշերային աշխատանքի համար աշխատավարձի նկատմամբ սահմանվող հավելումը պետք է (նշել սխալ պատասխանները):

- ա) կիսել, քանի որ աշխատողն աշխատում է ոչ լրիվ աշխատաժամանակով:
- բ) վճարել գիշերային ժամանակի համար սահմանված հավելման 30 տոկոսի 50 տոկոսը:
- գ) կրկնապատկել, քանի որ աշխատանքը կատարվում է գիշեր ժամանակ:

4. Հայտնի է, որ ոչ աշխատողի մեղքով պարապուրդի դեպքում աշխատողին վճարվում է ժամային դրույքաչափի առնվազն 2/3-ով, բայց ոչ պակաս նվազագույն ամսական աշխատավարձից: Կես դրույքով աշխատող անձին նվազագույնը որքա՞ն պետք է վճարել պարապուրդի ժամանակ, եթե նրա աշխատավարձը կազմում է նվազագույն աշխատավարձի կեսը՝ 34 000 դրամ:

Հարցի պատասխանի համար տարբերակներ չեն առաջարկվում: Ներկայացրեք Ձեր պատասխանը:

5. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 152-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ այն աշխատանքներում, որտեղ արտադրության պայմաններից ելնելով, հանգստի և սնվելու համար ընդմիջում տրամադրելն անհնար է, աշխատողին աշխատանքի ընթացքում սնվելու հնարավորություն է տրամադրվում: 24-ժամյա հերթափոխով աշխատողին աշխատանքային հերթափոխի ընթացքում քանի՞ անգամ պետք է սնվելու հնարավորություն տալ՝

- ա) 24-ժամյա հերթափոխի ընթացքում ընդամենը մեկ անգամ.
- բ) յուրաքանչյուր 8 ժամը մեկ անգամ, այսինքն՝ 3 անգամ.
- գ) յուրաքանչյուր չորս ժամը մեկ անգամ, այսինքն՝ 6 անգամ.
- դ) բոլոր պատասխանները սխալ են:

«2020Թ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»

ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՇՐՋԱՆԻ II ՓՈՒԼ

ԽՆԴԻՐ

Աշխատանքային պայմանագրով էլեկտրագազաեռակցողի ամսական աշխատավաճի հիմնական դրույքաչափը սահմանվել է 200 000 դրամ: Որպես առողջության համար վնասակար աշխատանք կատարող, տարիներ շարունակ, յուրաքանչյուր ամիս էլեկտրագազաեռակցողին ժամային դրույքաչափից բացի, վճարվել է նաև հավելում՝ ժամային դրույքաչափի 30 տոկոսի չափով:

Աշխատանքների թերբեռնվածության արդյունքում աշխատողը տարվա որևէ ամսին պատվերներ չի ստացել և կատարողական չի ունեցել:

Գործատունը նրան վճարել է միայն աշխատանքային պայմանագրով սահմանված հիմնական աշխատավարձը՝ 200 000 դրամը:

Աշխատողը չի համաձայնել գործատուի որոշման հետ և պահանջել է վերահաշվարկել և վճարել նաև վնասակար աշխատանքի դիմաց հավելումը:

Գործատունը մերժել է աշխատողի պահանջը՝ պատճառաբանելով, որ այդ ամսին նա կատարողական չի ունեցել և հետևաբար, նրան չի կարող վճարվել վնասակար աշխատանքի դիմաց հավելում:

Աշխատողը դիմել է դատարան: Ի՞նչ եք կարծում՝ դատարանն ի՞նչ վճիռ կկայացնի:

«2020Թ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»

ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼ

«ՀԱՎԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ/ԿԱՍ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ»

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածում առկա է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանած կանոններից խախտում: Գտեք այն:

«2020Թ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»

ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈԽԼ

«ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾՈՒԹՅՈՒՆ»

Մարդկային ռեսուրսների կառավարիչը ցանկանում է շատ կարևոր հարցով հանդիպում (քննարկում) անցկացնել կազմակերպության աշխատակազմի հետ:

Դուք եք մարդկային ռեսուրսների կառավարիչը: Թվարկե՛ք Ձեր գործողությունները՝ հանդիպումը (քննարկումը) բարձր և արդյունավետ կազմակերպելու համար:

«2020Թ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»

ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ II ՓՈԽԼԻ

ՀՈԳԵՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ

Ձեզ առաջարկվում է ընտրել ստորև նշված երկրաչափական պատկերներից որևէ մեկը՝ քառակուսին, շրջանը, եռանկյունին, զիգագազը կամ ուղղանկյունը, որով պարզ կդառնա ղեկավարի (կառավարչի) կերպարի մասին Ձեր պատկերացումները:


Բոլոր (գրեթե բոլոր) ղեկավարներն ընտրում են . . . երկրաչափական պատկերը: Դուք ո՞րը կընտրեիք:

Եթե Ձեր պատասխանը համընկնի ղեկավարի կերպարի վերաբերյալ աշխարհում ամենահայտնի հոգեբանների կարծիքի հետ, Դուք կվաստակեք 2 միավոր, եթե ոչ՝ 0 միավոր:



«2020թ. ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»

ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐԿԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ




Արտակ Ստեփանյան
ՀՀ Գեղարքունիքի մարզի ճամբարակի
համայնքապետարան
Աշխատակազմի քարտուղար
(29.6) միավոր

Լուսինե Նոժատյան
Արարատի քաղաքապետարան
Ֆինանսատնտեսական և զանմունների
բաժնի գլխավոր մասնագետ
(27) միավոր

Խաչատուր Ավետիսյան
Գեղարքունիքի մարզի Սարուխանի
համայնքապետարան
Աշխատակազմի քարտուղար
(26.6) միավոր

Սյուզաննա Գևորգյան
Երևանի քաղաքապետարանի
«Ջրային կառույցներ» ՓԲԸ
Կադրերի տեսուչ
(26) միավոր




Ռոբերտ Դանիելյան
Հրազդանի համայնքապետարան
աշխատակազմի քարտուղար
(26) միավոր

Նաիրա Վարդանյան
Մարդկային ռեսուրսների
կառավարման մասնագետ
(26) միավոր

Շողիկ Ղազարյան
ՀՀ Կոտայքի մարզի
Մրգաշենի համայնքապետարան
Աշխատակազմի քարտուղար
(25) միավոր

Զարուի Դազարյան
Արարատի մարզի Վարդաշենի
համայնքապետարան
Հաշվապահ, գնումների համակարգող,
(24) միավոր




Լիլիթ Հարությունյան
Գեղարքունիքի մարզի
Լճաշենի համայնքապետարան
Աշխատակազմի քարտուղար
(23) միավոր

Համիկ Զաքարյան
ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի
համայնքապետարան
Աշխատակազմի քարտուղար
(22.6) միավոր

Մարգարիտա Մինասյան
HR, կադրային հաշվապահ
(20) միավոր

Արմեն Առաքելյան
Կոտայքի մարզի Քանաքեռավանի
համայնքապետարան
Աշխատակազմի քարտուղար
(20) միավոր



Սամվել Էդնատյան
ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի
համայնքապետարան
Աշխատակազմի քարտուղար
(19) միավոր

Գոհար Բաղդասարյան
(18.5) միավոր

Գագիկ Հակոբյան
ՀՀ Շիրակի Փոքր Մանթաշի
համայնքապետարան
Աշխատակազմի քարտուղար
(18.5) միավոր

Մարգարիտա Զախարյան
ՀՀ Լոռու մարզ
Դսեղի համայնքապետարան
Աշխատակազմի քարտուղար
(15) միավոր

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՁԵՐ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ «ԳՈՐԾՔ» ԱՄՍԱԳՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ ԾՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ

(Ընթերցողների հարցերը ներկայացվում են առանց խմբագրման)



Հարց 1.

- Խնդրում եմ ամսագրում տպագրել աշխատանքը հեռավար եղանակով կազմակերպելու, աշխատաժամանակի ռեժիմը փոփոխելու, պարապուրդում գտնվելու և վճարելու, պարապուրդում գտնվելու և չվճարելու հրամանների օրինակելի ձևերը:

Պատասխան 1.

- Ներկայացվում է՝

1. աշխատանքը հեռավար եղանակով կազմակերպելու հրամանի օրինակելի ձևը.
2. աշխատաժամանակի ռեժիմը փոփոխելու մասին հրամանի օրինակելի ձևը.
3. պարապուրդում գտնվելու և պարապուրդում գտնվելու ժամանակահատվածում աշխատավարձ վճարելու հրամանի օրինակելի ձևը.
4. անհաղթահարելի ուժի ազդեցությամբ պայմանավորված աշխատողի պարապուրդում գտնվելու և աշխատավարձ չվճարելու հրամանի օրինակելի ձևը:



1.
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԵՌԱՎԱՐ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀՐԱՄԱՆԻ
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ

Օրինակելի ձև

Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ ՈՒ Թ Յ Ա Ն Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը
ԵՎ Խ ՈՐ ՀՐԴ Ա Պ Ա Տ Կ Ե Ր Ը
Տ Ն Օ Ր Ե Ն

Հ Ր Ա Մ Ա Ն Ն _ Ա

_____ (նշել գործատուի անվանումը) _____ (նշել աշխատողի անունը, ազգանունը, ստորաբաժանումը և պաշտոնը կամ ստորաբաժանման անվանումը¹⁾) **ԱՇԽԱՏԱՆՔԸ (ՆԵՐԸ) ՀԵՌԱՎԱՐ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 106-րդ, 106.1-րդ և 187.1-րդ հոդվածներով սահմանված կարգավորումներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. 2020թ. « _____ » « _____ » -ին _____ (նշել կազմակերպության անվանումը) _____ - ի (նշել աշխատողի անունը, ազգանունը, ստորաբաժանումը (առկայության դեպքում) և պաշտոնը²⁾) աշխատանքները կազմակերպել հեռավար (online) եղանակով:

2. Հեռավար (online) եղանակով աշխատաժամանակի ռեժիմով աշխատողներին՝ աշխատանքերն իրականացնել աշխատանքային ծրագրերին համապատասխան՝ յուրաքանչյուր աշխատողի աշխատանքային պայմանագրով սահմանված գործառույթներին համապատասխան:

3. Աշխատանքները կազմակերպել աշխատողի³⁾ (գործատուի) տեխնիկական միջոցներով, սարքավորումներով և _____ (նշել գործատուի անվանումը) կողմից տրված ծրագրային ապահովմամբ:

4. Յուրաքանչյուր աշխատողի աշխատանքային օրվա և շաբաթվա ռեժիմը, աշխատանքի սկիզբը և ավարտը մնում են անփոփոխ՝ աշխատանքային պայմանագրին և ներքին կարգապահական կանոններին համապատասխան:

5. Կադրային քաղաքականության մասնագետին՝ հեռավար (online) եղանակով աշխատողների աշխատաժամանակի տևողությունը հաշվառել աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Գլխավոր հաշվապահին՝ հեռավար (online) եղանակով աշխատողների աշխատավարձը հաշվարկել և վճարել աշխատանքային պայմանագրում սահմանված աշխատավարձի չափին կամ այն ձևավորվելու կարգին համապատասխան:

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:
Տնօրեն՝ _____ (ստորագրություն) _____ (անվանատառը, ազգանունը)

« _____ » « _____ » 2020թ. _____ թ.
Հրամանին ծանոթացա՝ _____ (ստորագրություն)

1 Անհրաժեշտության դեպքում հրամանը կարող է վերաբերել նաև կազմակերպության ամբողջ աշխատողներին;
2 Նայել տողատակի 1-ին գրառումը:
3 Եթե աշխատանքները կատարվում են աշխատողի անձնական սարքավորումներով, ապա ՀՀ աշխատանքային օրենսգրքի 208-րդ հոդվածի համաձայն՝ գործատուն պարտավոր է հատուցել աշխատողին այդ սարքավորումների մաշվածության համար: Հատուցման կարգն ու պայմանները սահմանվում են գործատուի և աշխատողի փոխադարձ համաձայնությամբ: Հետևաբար, անհրաժեշտ է աշխատողի և գործատուի միջև կնքել (ստորագրել) համաձայնագիր և հրամանում նշել հատուցման չափը:



2.

ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԻ ՌԵԺԻՍՏ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՐԱՄԱՆԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ

Օրինակելի ձև

**Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ ՈՒ Թ Յ Ա Ն Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը
ԵՎ Խ ՈՐ Հ Ր Դ Ա Պ Ա Տ Կ Ե Ր Ը**

Տ Ն Օ Ր Ե Ն

Հ Ր Ա Մ Ա Ն Ն _ Ա

_____ (նշել գործատուի անվանումը) _____ (նշել աշխատողի անունը, ազգանունը, ստորաբաժանումը (առկայության դեպքում) և պաշտոնը) **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԵԺԻՍՏ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 106-րդ և 187.1-րդ հոդվածներով սահմանվող իրավակարգավորումներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. 2020թ. « _____ » « _____ »-ին փոփոխել _____ (նշել գործատուի անվանումը) _____ -ի (նշել աշխատողի անունը, ազգանունը, ստորաբաժանումը (առկայության դեպքում) և պաշտոնը) աշխատաժամանակի ռեժիմը և սահմանել ոչ լրիվ աշխատանքային օր՝ օրական _____ ժամ տևողությամբ՝ մինչև նորմալ աշխատաժամանակին անցնելու մասին գործատուի հրամանի ընդունումը:
2. աշխատանքի (հերթափոխի) սկիզբը սահմանել ժ. _____ -ը, ավարտը՝ ժ. _____ -ը:
3. Կադրային քաղաքականության մասնագետին՝ ոչ լրիվ աշխատաժամանակի տևողությունը հաշվառել աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Գլխավոր հաշվապահին՝ ոչ լրիվ աշխատաժամանակի ռեժիմով աշխատողների աշխատավարձը վճարել առնվազն փաստացի աշխատած ժամանակին կամ կատարված փաստացի աշխատանքին համապատասխան⁴:
5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Տնօրեն՝

(ստորագրություն)

(անվանատառը, ազգանունը)

« _____ » « _____ » 2020թ.

ք. _____

Հրամանին ծանոթացա՝

(ստորագրություն)

⁴ Աշխատավարձը կարող է վճարվել նաև նորմալ աշխատաժամանակին համապատասխան:

3.

**ՊԱՐԱՊՈՒՐԴՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ԵՎ ՊԱՐԱՊՈՒՐԴՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՅԱՏՎԱԾՈՒՄ ԱՇԽԱՏԱԿԱՐՁ
ՎՃԱՐԵԼՈՒ ՀՐԱՄԱՆԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ**

Օրինակելի ձև

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՊԱՏԿԵՐԸ
ՏՆՕՐԵՆ**

ՀՐԱՄԱՆ N _ Ա

« _____ » -ի ՈՐՈՇ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՉ ԱՇԽԱՏՈՂԻ ՄԵՂՔՈՎ ՊԱՐԱՊՈՒՐԴ
ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրիք 107-րդ և 186-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումներով, ինչպես նաև հիմք ընդունելով արտակարգ դրության իրավական կարգավիճակից բխող միջոցառումներից և ՀՀ պարետի պահանջներից՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. « _____ » -ի (նշել կազմակերպության անվանումը) _____ ստորաբաժանման աշխատողների համար⁵ 202_թ. « _____ » « ___ »-ից 202_թ. « _____ » « ___ »-ն ընկած ժամանակահատվածում հայտարարել պարապուրդ՝ պայմանավորված _____ պատճառով:

2. Պարապուրդի ժամանակ սույն հրամանի 1-ին կետում նշված աշխատողներին կամ նրանց մի մասին (անհրաժեշտը նշել) աշխատանքի վայր ներկայանալու համար սահմանել ոչ լրիվ աշխատանքային օրվա ռեժիմ⁶:

3. Գլ. հաշվապահին՝ պարապուրդի յուրաքանչյուր ժամվա համար պարապուրդում հայտնված անձանց վճարել մինչև պարապուրդը նրանց միջին ժամային աշխատավարձի _____ չափով⁷:

4. Անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ _____ -ին՝
ա) սույն հրամանի 1-ին կետում նշված աշխատողներին պատշաճ կարգով ծանոթացնել սույն հրամանի բովանդակությանը:

բ) պարապուրդի ժամանակահատվածի վերաբերյալ համապատասխան նշումներ կատարել աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրում:

5. Հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հիմք՝ _____ ստորաբաժանման ղեկավար _____ (նշել ստորաբաժանման ղեկավարի անունը, ազգանունը) զեկուցագիրը:

Տնօրեն՝

_____ (ստորագրություն)

_____ (անվան սկզբնատառը և ազգանունը)

« ___ » _____ 202_թ.
թ. _____

Հրամանին ծանոթացանք՝

_____ (ստորագրություն)

_____ (անվան սկզբնատառը և ազգանունը)

5 Պարապուրդ կարող է սահմանվել կազմակերպության բոլոր աշխատողների համար:
6 Կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրով կամ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում կարող են նախատեսվել դեպքեր, երբ աշխատողը կարող է պարապուրդի ժամանակ չներկայանալ աշխատանքի:
7 Եթե ոչ աշխատողի մեղքով պարապուրդի ժամանակ աշխատողին չի առաջարկվում նրա մասնագիտությանը, որակավորմանը համապատասխանող այլ աշխատանք, որը նա կարող էր կատարել առանց իր առողջությանը վնաս պատճառելու, ապա աշխատողին պարապուրդի յուրաքանչյուր ժամվա համար վճարվում է մինչև պարապուրդը նրա միջին ժամային աշխատավարձի առնվազն երկու երրորդի չափով, սակայն ոչ պակաս, քան օրենսդրությամբ սահմանված նվազագույն ժամային դրույքաչափը:



4.

**ԱՆՀԱՂՈՒՄԱՆ ՈՒՇԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՐՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՊԱՐԱՊՈՒՐԴԻ ՀՐԱՄԱՆԻ
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ**

Օրինակելի ձև

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՊԱՏԿԵՐԸ
ՏՆՕՐԵՆ**

ՀՐԱՄԱՆ N ___ Ա

« _____ » -ի (նշել գործատուի անվանումը) ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՉ ԱՇԽԱՏՈՂԻ ՄԵՂՔՈՎ
ՊԱՐԱՊՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 107-րդ և 186-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի իրավակարգավորումներով, ինչպես նաև ելնելով արտակարգ դրության իրավական կարգավիճակից բխող միջոցառումներից և ՀՀ պարետի պահանջներից՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. « _____ » -ի _____ ստորաբաժանման աշխատողների համար⁸ 202_թ. « _____ » « _____ »-ից 202_թ. « _____ » « _____ »-ն ընկած ժամանակահատվածում հայտարարել պարապուրդ՝ անհաղթահարելի ուժի առկայությամբ պայմանավորված:

2. Պարապուրդի ժամանակ սույն հրամանի 1-ին կետում նշված աշխատողներին կան նրանց մի մասին (անհրաժեշտը նշել) աշխատանքի վայր ներկայանալու համար սահմանել ոչ լրիվ աշխատանքային օրվա ռեժիմ⁹:

3. Գլ. հաշվապահին՝ պարապուրդի յուրաքանչյուր ժամվա համար պարապուրդում հայտնված անձանց չվճարել:

4. Անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ _____ -ին՝
ա) սույն հրամանի 1-ին կետում նշված աշխատողներին պատշաճ կարգով ծանոթացնել սույն հրամանի բովանդակությանը:

բ) պարապուրդի ժամանակահատվածի վերաբերյալ համապատասխան նշումներ կատարել աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրում:

5. Հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հիմք՝ _____ ստորաբաժանման ղեկավար _____ (նշել ստորաբաժանման ղեկավարի անունը, ազգանունը) զեկուցագիրը:

Տնօրեն՝ _____ (ստորագրություն) _____ (անվան սկզբնատառը և ազգանունը)

« _____ » _____ 202_թ.
թ. _____

Հրամանին ծանոթացանք՝ _____ (ստորագրություն) _____ (անվան սկզբնատառը և ազգանունը)

« _____ » « _____ » 2020թ.
թ. _____

Հարց 2.

- Աշխատողի ընտանիքի անդամներից մեկի մահվան հետ կապված կազմակերպությունը ցանկանում է աշխատողին դրամական աջակցություն ցուցաբերել: Արդյո՞ք հնարավոր է նմանօրինակ օգնության ցուցաբերումը և արդյո՞ք անհրաժեշտ է դրա համար հրաման տալ:

8 Պարապուրդ կարող է սահմանվել աշխատակազմի բոլոր աշխատողների համար:
9 Կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրով կամ անհաղթահարելի ուժի առկայությամբ պայմաններում կարող են նախատեսվել դեպքեր, երբ աշխատողը կարող է պարապուրդի ժամանակ չներկայանալ աշխատանքի:

Պատասխան 2.

- Ընտանիքի անդամի մահվան հետ կապված աշխատողին դրամական աջակցություն ցուցաբերելը ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված չէ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է լրացուցիչ աշխատավարձի տեսակներից մեկը՝ լրավճարը: Լրավճարը, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով, գործատուի իրավական ակտով նախատեսված դեպքերում և չափերով հիմնական աշխատավարձից, հավելումից, հավելավճարից և պարգևատրումից բացի, աշխատողին վճարվող ցանկացած ձևի վարձատրությունն է: Տվյալ դեպքում աշխատողին կարելի է վարձատրել՝ լրավճարի տեսքով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անհատական աշխատանքային հարաբերությունները կարգավորելու նպատակով գործատուն ընդունում է անհատական իրավական ակտեր:

Չեղարար, ընտանիքի անդամի մահվան դեպքում աշխատողին չվճարվող արձակուրդ և գործատուի հնարավորության դեպքում նաև դրամական օգնություն տրվում է գործատուի իրավական ակտով՝ հրամանով (հրամանի օրինակը կցվում է): Միաժամանակ հայտնում են, որ ընտանիքի անդամի մահվան դեպքում աշխատողին տրամադրվող միանվագ դրամական օգնությունից եկամտային հարկ չի պահվում (ՀՀ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետ):

Հավելված 1
Օրինակելի ձև

ՎԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՊԱՏԿԵՐԸ ՏՆՕՐԵՆ

Հ Ր Ա Մ Ա Ն Ն __ Ա

« _____ »-ի (նշել կազմակերպության անվանումը) **ԱՇԽԱՏԱԿԻՑ** _____ -ին (նշել աշխատողի անունը, ազգանունը) **ԶԿՃԱՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**¹⁰

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի 5-րդ կետի և 176-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 178-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Կադրային քաղաքականության ստորաբաժանման ղեկավար _____ -ին՝

202_թ. « _____ » « ____ » -ից 202_թ. « _____ » « ____ »-ն ընկած ժամանակահատվածում _____ (նշել աշխատողի անունը, ազգանունը և պաշտոնը) -ին տրամադրել չվճարվող արձակուրդ՝ _____ (նշել օրերի թիվը) օր տևողությամբ:

2. Գլխավոր հաշվապահ _____ -ին՝

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով _____ -ին (նշել աշխատողի անունը, ազգանունը և պաշտոնը) հատկացնել միանվագ դրամական օգնություն՝ ____ դրամի չափով:

3. _____ -ին (նշել աշխատողի անունը, ազգանունը և պաշտոնը)՝ աշխատանքի անցնել 202_թ. « _____ » « ____ » -ին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հիմք՝ _____ -ի (նշել աշխատողի անունը, ազգանունը) 202_թ. _____ « ____ » -ի դիմումը:

Տնօրեն՝ _____ (ստորագրություն) _____ (անունը, ազգանունը)

« ____ » _____ 202_թ.
թ. _____

Հրամանին ծանոթացա՝ _____ (ստորագրություն) _____ (անունը, ազգանունը)

¹⁰ Դրամական օգնություն տրամադրելու պարտադիր պայման ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված չէ:

ՀԱՇՎԱՊԱՅԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐ

ՁԵՐ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ «ԳՈՐՏԶ»-Ի «ՀԱՇՎԱՊԱՅԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ» ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ

Հարց 3.

- Ընկերությունը ծառայություն է մատուցել դիվանագիտական կազմակերպության ներկայացուցչին, որն ուներ համապատասխան տեղեկանքը: Արդյոք պարտադիր է գրել հաշվարկային փաստաթուղթ՝ Օ-ական ԱԱՀ-ն հիմնավորելու համար:

Պատասխան 3.

- ՀՀ հարկային օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ի Օ տոկոս դրույքաչափով հարկվում է ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններին և հյուպատոսական հիմնարկներին, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպություններին (այսուհետ՝ դիվանագիտական ներկայացուցչություններ) ապրանքների մատակարարումը, նրանց համար աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը:

Սույն կետով սահմանված գործարքների նկատմամբ ԱԱՀ-ի Օ տոկոս դրույքաչափը կիրառվում է միայն այն պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների նկատմամբ, որոնց օրենսդրությամբ ԱԱՀ-ի Օ տոկոս դրույքաչափի կիրառություն է սահմանված տվյալ երկրում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության համար, կամ եթե նման կարգ նախատեսվում է ՀՀ միջազգային պայմանագրերով:

Սույն կետով սահմանված դեպքերում ԱԱՀ-ի Օ տոկոս դրույքաչափի՝

ա. կիրառությունը հիմնավորվում է ապրանք մատակարարող, աշխատանք կատարող և (կամ) ծառայություն մատուցող ԱԱՀ վճարողի կողմից Օրենսգրքի 56-րդ հոդվածով սահմանված կարգով՝ համապատասխան հաշիվ վավերագրերի դուրսգրմամբ:

Այսպիսով, ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ կիրառելու համար հաշիվ վավերագիր գրելը հանդիսանում է անհրաժեշտ պայման:

Հարց 4.

- Ընկերությունը 2020թ. առաջին եռամսյակի շահութահարկի կանխավճարը կատարել է հիմք ընդունելով 2018թ. շահութահարկի գումարի 20%-ը, սակայն 2019թ. շահութահարկը ստացվել է ավելի մեծ, քան 2018թ. շահութահարկը, հետևաբար եռամսյակային կանխավճարը նույնպես պետք է լիներ ավելի մեծ:

Այս դեպքում կհաշվարկվե՞ն արդյոք տույժեր՝ կանխավճարի չվճարված մասի նկատմամբ և ի՞նչ ժամկետում պետք է վճարվի տարբերությունը:

Պատասխան 4.

- ՀՀ հարկային օրենսգրքի 135-րդ հոդվածի 2.1-րդ մասի համաձայն՝ նախորդ հարկային տարվա համար ներկայացված շահութահարկի (այդ թվում՝ ճշտված) հաշվարկը հիմք է հանդիսանում այդ հաշվարկը ներկայացնելու օրվան հաջորդող առաջիկա կանխավճարի մեծության հաշվարկման համար, եթե հաշվարկը ներկայացվել է մինչև տվյալ հարկային տարվա վերջին կանխավճարի կատարման վերջնաժամկետը:

Այսինքն՝ առաջին եռամսյակի կանխավճարի տարբերության նկատմամբ տույժ չի հաշվարկվի, իսկ տարբերությունը պետք է վերահաշվարկվի երկրորդ եռամսյակի շահութահարկի կանխավճարի նկատմամբ:



Ռադիոկայանների մայրաքաղաք

YEREVAN FM 101.9

Քեռ.՝ (374 10) 55 10 12
www.yerevanfm.am

